

ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԴԱՍԱԳԻՐՔ

Բ. ՏԱՐԻ

ԿԱԶՄԵՏԻՆ
Մ. ԴՈՒՐԳԱՐՅԱՆ

ՊԵՏԼՐԱՏ

1 9 3 3
ՌՈՍՏԱՆԿԱՆՔԱՑՐԱԺԻՆ


ՅԵՐԵՎԱՆ

ՀԱՅ ՈՑ ԼԵԶՎԻ

ԴԱՍԱԳԻՐՔ

Բ. ՏԱՐԻ

Կազմեց՝ Մ. ԴՈՒՐԴԱՐՅԱՆ



ՊԵՏՀՐԱՆ — ՈՒՍՄԱՆԿԱՐԱՏՐԱԺԻՆ

ՅԵՐԵՎԱՆ — 1933




11-266779p

Գատ. և լեզվի իմբադիր Ն. Այվադյան
Տեխ. խմբագիր Գ. Զենյան
Նկարիչ՝ Է. Ախիկյան
Սրբազրիչ՝ Գաբ. Հակոբյան
Գեոհրադ. ապագան. Գլավիտ 8339 (բ), Հրատ. №2668
Գատվ. № 1675, Ֆիրմ 60.000.

Հանձնված է արժագրույթյան 14 հունիսի 1933 թ.
Մտորագրված է ապագրելու 25 հունիսի 1933 թ.

1. Յե՛րբ ե լինում

Դաշար մերկանում,
որը կարճանում,
քամին ե խաղում,
անձրեք մաղում:
Այս յե՛րբ ե լինում...



2. Նորից դեպի աշխատանք

Կարծես յերեկ եր, վոր մենք փակեցինք
դպրոցական ցուցահանդեսը և բաժանվեցինք
իրարից:

Ինչպես շո՛ւտ անցան ամռան ամիսները:
Մենք դարձյալ միասին ենք. ահա՛ մեր ըն-

կերները, մեր ուսուցիչները. բոլորն ել ուրախ են,
կազդուրվել են, թարմացել. ամառվա արևն այրել
ե դեմքերը, մարմինը:

Պատմում են իրենց տեսածը, լսածը.

— Յես սարն եյի բարձրացել... գույն-գույն
ծաղիկներ, ամպրոպ, փոթորիկ, կյանքն այնտեղ
հետաքրքրական ե, աշխատանքը՝ հաճելի.

— Գիշերն անտառում այնքա՛ն լավ ե, բուխ
կանչը, պախրայի վառնաձայնը տերևների խշշոցը...
անտառը յերբեք չի քնում...

— Իսկ ճամբարո՞ւմ. մի՞թե կա մեկը, վոր
չհիանա ճամբարով. բնության գեղեցկությունը,
մաքուր ողը, սառը ջրերը և, այս բոլորի հետ՝ մեր
հետաքրքրական խաղերն ու ժամանցը, խարույկի
բոցերն ու մեր եքսկուրսիաները...

Յե՛վ այսպես հանգստացած, թարմ տպավո-
րություններով ու լի յեռանդով մենք նորից անց-
նում ենք աշխատանքի:

3. Հասմիկի նամակը

«Իմ լա՛վ տատի,
անո՛ւշ տատի,
վաղուց ես դու
հեռացել.
ինչ կլինի՞
վերկենաս զաս,
յես քեզ շա՛տ եմ
կարոտել:

Իմ լա՛վ տատի,
անո՛ւշ տատի,

պիոններ եմ
հիմի յես,
դպրոց գնում,
մարզանք անում,
գիր եմ գրում
մեծի պես»:

Յե՛վ Հասմիկը
գրեց, գրեց,
լցրեց ամբողջ
մի յերես,

մին ել նայեց,
սպա ծալեց
ու ծրարի
մեջ գրեց:
— Ես ել հասցեն...
Ու Հասմիկը

յեղավ՝ նամակն
ուղարկի,
գցեց փոստի
արկղը պատի,
գնաց դպրոց՝
պարապի:

4. Կոունկը

1

Անտառապահ Սարգիսը վորսորդություն շատ
եր սիրում և միշտ հրացանով եր ման գալիս:
Աշնան մի որ նա անցնում եր անտառի
ծայրով. վերևից մի աղմուկ լսեց: Նայեց—թռ-
չունների յերամ եր:

«Սագեր են»,—մտածեց Սարգիսն ու նշան
բռնեց, կրակեց. յերամից մի թռչուն ընկավ:
Սարգիսը մոտեցավ նրան:

— Ձեռքս կոտրվեր, այս ի՞նչ արի: Ձե՛ վոր
սա կոունկ ե, սագ չե. խեղճ թռչուն, — ասաց ու
բարձրացրեց կոունկին:

Կոունկի վոտքն եր վիրավորվել:

— Վոչի՛նչ, սիրելի՛ս, յես քեզ կբժշկեմ,—
ասաց նա ու վիրավոր թռչնին տուն տարավ:

— Տե՛ս, քեզ ընկեր եմ բերել,—ասաց նա իր
աղջկան:

Նաղիկին դուր յեկավ կոունկը. նա խոստա-
ցավ խնամել թռչնին մինչև մյուս աշուն, յերբ
կոունկի ընկերները նորից կանցնեն այդ կողմե-
րից:

Այդ որվանից կռուները նազիկի սիրելին դարձաւ. նա սիրում եր և խնամում վիրավոր թռչնին:

Սկզբում կռուները չեր կարողանում յերկու վոտքի վրա կանգնել. վիրավոր վոտքը միշտ վերև եր պահում: Յերբեմն ել հենվում եր պատին, վոր վայր չընկնի:

Շուտով կռուները բոլորովին ընտելացաւ, հենց վոր նազիկը կանչում եր, իսկույն գալիս եր մօտը. նազիկը շատ գոհ եր:

2.

Անցաւ մի ամբողջ տարի:

Աշնանը, յերբ ելի չվում եյին թռչունները, ու նրանց յերամներն անցնում եյին Սարգսենց բակի վերեւից, կռուները լսում եր նրանց ձայները... նա բարձրացնում եր գլուխը, թափահարում թևերը և ուղում եր թռչել, բայց իզո՛ւր. վիրավոր վոտքը չեր թողնում: Բոլորն ել խղճում եյին կռուներին, վոր չի կարողանում միանալ իր ընկերների յերամին:

Մի օր եր, յերբ նազիկը կերակրում եր կռուներին, վերեւից, շատ մօտիկ, կռուներին կռոց



լսվեց: Յերկուսն ել գլուխները բարձրացրին. կռուներին մի յերամ եր անցնում: Կռուները թափահարեց թևերը, ուղղեց փետուրները և թռավ—բարձր ճիչ արձակելով:

— Թռա՛վ, հայրի՛կ, թռա՛վ իմ կռուները,— ուրախ-ուրախ բացականչեց նազիկը:

Նա գոհ եր, վոր կռուները գտաւ իր ընկերներին, թեպետ ամառսում եր, վոր բաժանվեց իր ընկերովից:

5. Անվերջ պատմություն

Պուտիկ, պուտիկ,
պուտպուտիկ,
չղարշ թևեր
խատուտիկ,
շողերի տակ
վառվառն,
վորտեղ ծաղիկ՝
դու տիտիկ:
Ծաղիկներից
հյուսթ ծծան,
տերևներում
ձու ածան:

Թիթեռնիկը
ձու ածեց,
տերևի տակ
ձուն պահեց:

ցողուն, տերև
հովանի,
վոր թշնամին
չտանի:

Անցաւ աշուն,
ցուրտ ձմեռ,
յեկավ դարուն
կենսաբեր:
Զվում բացվեց
ներսից դուռ
և լույս ընկավ
մի թրթուր:
Փոքրիկ թրթուր
անկշտում,
տերևներ ե
խփշտում,

ինքը աճում,
զորանում.
ծառ ու ծաղիկ—
չոր անում:

Փոփում չուփում
կես արթուն,
իրեն թելով
փաթաթում,
քնում մո՛ւշ-մո՛ւշ
բոժոժում,
հարսնյակ դարձած՝
չի շարժվում:

Յեվ բոժոժում
քնած դեռ,
նա դառնում է
մի թիթեռ,
խկույն անցնում
է ուժի,
ծակում պատը
բոժոժի,
ու բոժոժից
լույս աշխարհ—
չորս թևանի
նախշ-նկար:

Պուտիկ, պուտիկ
պուտուտիկ,
շղարշ թևեր

խատուտիկ,
շողերի տակ
վառվռուն,
թը՛ռ-թը՛ռ թիթեռ
թուփռուն.
ծաղիկներից
հյութ ծծան,
տերևներում—
ձու ածան...

Ապա նորից
ձու ածում,
տերևի տակ
ձուն պահում...

Նորից աշուն,
ցուրտ ձմեռ,
նորից գարուն
կենսաբեր.
ձվում բացվում
է մի դուռ,
լույս է ընկնում
մի թրթուր...

Փոքրիկ թրթուր
անկշտում,
տերևներ է
խփշտում:

Ինքը աճում,
զորանում,
ծառ ու ծաղիկ
չոր անում...

Յեվ այսպես միշտ
ու անվերջ—
պատմությունը
չունի վերջ:

Թրթուրն ուրի—
չորանա,
խեղճ բուսականի—
չորանա:

6. Մեղվանոցում

Մարկոս պապին պահակ էր սովխողի մեղվա-
նոցում. նրա փոքրիկ տնակի չորս կողմը շա՛տ
ծաղիկներ կային: Պապիկն ամբողջ որս արևի տակ
նստած աշխատում էր:

Ամառվա կիսին քաղաքից պապիկի մոտ յեկավ
Յուլիլը:

Պապը Յուլիկին տարավ մեղվանոց և պատմեց,
թե ի՞նչպես են մեղուները ծաղիկներից քաղց՞
հյութ ծծում, ի՞նչպես են մոմաթերթ պատրաս-
տում ու նրանց մեջ մեղր լցնում:

Յուլիլը շատ էր ուզում տեսնել, թե ի՞նչպես
են մեղուները մեղրահացի մեջ մեղր լցնում.
մոտեցավ փեթակին, կռացավ ու անցքից ներս
նայեց. բայց հանկարծ դեմքին մի ծակոց զգաց

ու յետ փախա՛վ. մեղուներն ընկան նրա յետևից,
հարձակվեցին վրան ու սկսեցին խայթել յերեսը:
Յուլակը ցավից ճչաց ու յերկար ժամանակ
լալիս եր:

Յերեսն այնքան ուռավ, վոր աչքերը փակ-
վեցին:

Պապը Յուլակի յերեսին մածուն քսեց. ուռուցքն
անցավ, աչքերը բացվեցին:

Յուլակը սովորեց, թե ինչպես պետք է վար-
վել մեղուների հետ:

Նա հանդարտ անցնում եր մեղուների մոտով,
չեր անհանգստացնում նրանց: Մեղուները նրան
ե՛լ չեյին կծում:

7. Առյուծն ու աղվեսը

(առակ)

Առյուծը ծերացել եր. թաթերը թուլացել
եյին, ատամները թափվել, ել չեր կարողանում
վորս բռնել: Նա մտածեց խորամանկությամբ
վորս ճարել. պառկեց քարայրում ու հիվանդ
ձևացավ: Գազանները գալիս եյին նրան տեսնելու:
Բայց վոչվոք յետ չեր դառնում: Առյուծը բռնում
եր նրանց և ուտում:

Յեկավ վերջապես աղվեսը, կանգնեց քարայրի
մուտքի առաջ և հարցրեց.

— Ինչպե՞ս ե առողջությունդ:

Առյուծը պատասխանեց.

— Վա՛տ ե, ինչո՞ւ ներս չես գալիս, բարե-
կա՛մս:

Աղվեսը պատասխանեց.

— Կգա՞յի, բայց տանդ շուրջը թողած հետքերն
ուրիշ բան են ասում. շատերն են ներս մտել, իսկ
դուրս—վոչվոք չի յեկել:

8. Քո գործը սովորելն ե

Սիմոնը նստել եր կոլխովի գրասենյակում.
ներս վազեց Նազիկը:

— Ի՞նչ ես ուզում, աղջիկ, ինչո՞ւ դպրոց չես
գնացել:

— Մայրիկս ուղարկեց... իր տեղը... կովերը
կթելու... ինքը հիվանդ ե,—վրա տվեց Նազիկը մի
քիչ շփոթված:

— Կով կթելո՞ւ... Դե, հլա դու դպրոց գնա՛,
ասաց Սիմոնը:

— Առանց քեզ ել գործը կկատարվի: Մայրիկիդ
փոխարեն ուրիշին ենք ուղարկել: Գնա՛—այդպես
ել ասա նրան:

— Յես կարո՞ղ եմ կով կթել, — արդարացավ
Նազիկը:

— Իսկ ո՞վ ե քեզ փոխարինելու դպրոցում.
մայրիկիդ հեշտ ե փոխարինելը, իսկ քեզ—վո՛չ:
չե՞ վոր դու ինքդ պետք ե սովորես:

Սիմոնը կատակով ճանապարհ գցեց Նազիկին
ու ասաց, վոր իսկույն դպրոց վազի:

Կարդում.

Կարդում, այ իմ խելով Տանուկ,
Կարդում, գրիր Կարին Բոլոր.
Կարդալորի խելին ե կրրուկ,
Մարի Կալծառ ու լուսալոր:

9. Ծիսն ու ծիծեռնակը

Ծիծեռնակը
աշունքին
յեկավ, ասաց
ծիտիկին.
— Յե՛կ, քեզ տանեմ
տաք հարավ,
ուր չես յեղել
դու բնավ:
Մնաս ետեղ
ի՞նչ անես,
վո՛չ կեր ունես,
վո՛չ պաշար,
վո՛չ ել բուռդ
ե հարմար:
— Ե՛հ, բան չունես,
քույրիկ ջան,—
ասաց ծիտը

ճկճկան.—
ի՞նչպես գնամ
հեռու տեղ.
Թեք չունեմ
յես ուժեղ:
Յե՛վ ո՞վ կտա
հարավում
մի տաք անկյուն՝
իր բնում:
Հացի փշրանք,
կամ ձավար
բավական ե
ինձ համար:
Հոկտեմբերիկ,
պիտներ,
թե տղա, թե
աղջիկներ,

ձմռան սաստիկ
որերին

կուշտ կեր կտան
ծաերին:



10. Բրդոտ խաղընկերը

Պանդոկում նստած եր արջ պարածողը և
ճաշում եր, իսկ արջը կապած եր դուրսը՝ սյունից:
Նրա տեսքը սաղսափելի չեր, բայց վոշոքի վնաս
չեր տալիս:

Պանդոկի վերեի սենյակում խաղում եյին
յերեք փոքրիկ յերեխա: Մեծը վեց տարեկան
եր, իսկ ամենից փոքրը՝ հազիվ յերեք տարեկան:
Թրա՛խկ, Թրո՛ւխկ, մեկն սկսեց բարձրանալ
սանդուխքով: Ո՞վ պիտի լիներ:

Հանկարծ դուռը լայն բացվեց, ու ահագին
բրդոտ արջը մտավ ներս:

Յերեխաները սաստիկ վախեցան, ամեն մեկը
մտավ մի անկյուն: Արջը մոտեցավ յերեքին եր,
հոտոտեց իր լայն դնշովը, բայց վոշինչ չարավ

նրանց. «Յերեկ սա մի մեծ շուն ե», սիրտ առան
յերեխաներն ու սկսեցին փողաքել արջին:

Արջը փովեց հատակին. փոքրիկն ընկավ նրա
վրա, թավալ եր տալիս ու խաղում:

Իսկ մեծ յեղբայրը բերեց իր թմբուկը և
սկսեց զարկել: Հենց վոր թմբուկը թնդաց, արջը
տեղից վեր կացավ, կանգնեց յետևի թաթերի վրա
ու սկսեց պար գալ:

Մի ուրախություն եր վո՛ր...

Իսկույն յերեխաներից ամեն մեկը վերցրեց
մի-մի փայտ իբրև հրացան. արջին ել տվին մի
ավելի կոթ, վոր շատ ամուր բռնել եր:

Հիանալի ընկեր եյին գտել: Ու իրար յետևից
շարված՝ վտանները խփում եյին գետնին ու քայ-
լում:

— Մեկ-յերկո՛ւ, մեկ-յերկո՛ւ...

Հանկարծ դուռը բացվեց, ու մայրը սարսա-
փահար կանգնեց դռան մեջ: Յերեխաներից մեկն
ուրախ-ուրախ գլխով արավ:

— Մայրիկ, տե՛ս, գինվոր ենք խաղում:

Հենց այդ վայրկյանին վրա հասավ արջ պար-
ածողը...

11. Դաշտերում

Մեր կոլխոզի
դաշտերում
կյանքն ե աշխուժ
միշտ յեռում:


մշակում են
սպիտակ
քուլա-քուլա
լավ բամբակ,

ծխախոտ են մշակում,
թթենիներ են տնկում:
Առվից—առու,
մարգից—մարգ

կոլխոզնիկներ
շարքե-շարք
աշխատում են
յեռանդով,
ուրախ ու գոհ,
անվրդով:
Ժամանակ ե՝

քաղհանել,
աշխատավոր
բանվորներ
դուրս են գալիս

դաշտերը,
ինչպես կովոդ
վաշտերը,
պայքարում են
ու մրցում—
նոր, լավ կյանք են
կառուցում:



12. Փոքրիկ ձկնորսներ

Սեղան ու Պետիկը կարթը ջուրը գցել, սպա-
սում եյին սրտատրոփ:

— Ընկա՛վ, ընկա՛վ, — բացականչեց Պետիկը:

Քաշեցին... մի մեծ գորտ դուրս յեկավ:
 — Ե՛, դու միշտ խոսում ես ու ձկներին
 փախցնում,— բարկացավ Սեդան:— Տո՛ւր, յես գցեմ:
 Բավական սպասելուց հետո կարթը շարժվեց:
 — Հը՛, չասացի՞, դե հիմի տե՛ս,— ասաց Սե-
 դան:

Քաշեց... ես անգամ դուրս յեկավ խեցգետին:
 — Ես ել դո՛ւ,— ծիծաղեց Պետիկը.— արի հիմա
 միասին բռնենք:

Ու մի քարի վրա կանգնած՝ սպասում էին
 անհամբեր: Կարթը շարժվեց, բայց այս անգամ
 այնքան ուժեղ, վոր քիչ մնաց յերկուսն ել ջուրն
 ընկնեյին:

— Ի՞նչ ես կարծում, ես անգամ ի՞նչ կլինի,—
 հարցրեց Սեդան:



— Յես ասել եմ՝ մի մեծ իշխան ձուկ:

— Իսկ յես կարծում եմ— մի մեծ լոբո՛ւ...

Ու վողկվորված սկսեցին քաշել:

— Մե՛կ, յե՛րկու, յե՛րեք— չափ եր տալիս
 Սեդան անբալով:

Շատ քաշելուց հանկարծ թելը կտրվեց, ու
 յերկուսը միասին գետին գլորվեցին:

Կարթը մի մեծ կոճղի յեր դեմ առեւ:

13. Պայմանագիր

Յես կապել եմ պայմանագիր
 իմ դասընկեր Նմամայի հետ.
 սովորում եմ դասս կարգին,
 և Նմաման ել չի մնում յետ:

Մի ժամանակ Նմաման թույլ եր,
 ուշք չեր դարձնում նա դասերին,
 ընկերների հետ աշխատեց—
 Նմաման դարձավ հարվածային:

14. Անվախ Մարիամը

— Մարիո՛ւմ, գնա մառանից կարտոֆիլ բեր,—
 կանչեց մայրը խոհանոցից:

Մարիամն ունքերը կիտեց... վախենում եր
 մկներից, բայց չեր ուզում ցույց տալ:

Միթե ամոթ չեր. ութ տարեկանահագին աղ-
 ջիկը վախենար մկներից:

Բանալին վերցրեց ու գնաց:

Առաջ վոտքով ուժեղ զարկեց դռանը, իբր թե
 պատահամբ, հետո՝ արգելով բաց արավ դուռը,
 վոր մկները լսեն ու վախչեն. կողմի իրենից ա-
 ռաջ նետեց ներս, «փը՛շտ-փը՛շտ» կանչեց, արագ

վազեց ներս և ինքն ել չիմացավ, թե ինչպես կողովը լցրեց կարտոֆիլով ու դուրս թռավ:

Վազելով հասավ խոհանոց, կողովը դրեց մօր առջևը և հպարտ-հպարտ ասաց.

— Բերի, մա՛յրիկ:

Բայց մեր մեջը մնա՛ մառանի դուռը բաց եր թողեր:

15. Ածխափորի յերգը

Մենք իջել ենք հողի տակ՝
սև քարածուխ հանելու.
հարված, իջի՛ր, զա՛րկ, հա՛ զարկ
առանց զազար առնելու:
Հանքն ամուր ե, ինչպես քար,
ածուխը խոր՝ քարի տակ.
քլունգ, իջի՛ր անդադար,
բանվո՛ր, ամուր թափով զա՛րկ:
Քանդիր, քանդիչ՝ մեքենա,
մուրճ ու քլունգ, զնգացե՛ք,
բանվո՛ր, ելի՛ խոր գնա,
ածուխի նոր շերտ բացե՛ք:
Ինչքան ածուխ ե հանված,
սայլակներին բեռնված,
վոսկու նման փայլփլում,
բահի զարկից փշրվում:

16. Ձկնավաճառի մոտ (անցյալում)

Առավոտ շատ վաղ ինձ զարթեցրին.

— Վե՛ր կաց, լվացվի՛ր ու շտապիր.


— Ո՛ւր, հարցրի՛ յես քնաթաթախ.

— Գործ՛, ձկնավաճառի մոտ...

Յես ու Պետրուխան ճանապարհ ընկանք: Յերբ խանութ հասանք, տեսանք՝ գրասեղանի կողքին կանգնած ե մի բարձրահասակ, հաստափոր մարդ:

— Գլո՛ւխ տուր, — շնչաց Պետրուխան:

Յես գլխարկս հանեցի:



— Անո՛ւնդ, — թնդաց հաստափոր մարդու խոսքոտ ձայնը:

— Ալյոշա, — ասացի յես կարճ:

— Դե տե՛ս, Ալյոշա, աչքերդ ջուխի բաց արա. ու խելքդ գլուխդ հավաքիր: Հիմա դու ինձնից բացի տեր չունես. փո՛չ ծանոթ, փո՛չ բարեկամ յես եմ քո հա՛յրն եր մա՛յրն ել հասկացա՞ր...

Յես հասկացա ու... լռեցի:

Նա պառկեց կողքիս, մեջքը դեմ արեց. մեջքին պայուսակ կար—կարմիր խաչով: Յես ձեռքս յերկարացրի, մի կերպ յող ու բինտ հանեցի, վերքս կապեցի: Շունն ել չսպասեց. նա անհայտացավ. յես այլևս չեյի անհանգստանում. գիտեյի, վոր նա գնաց ոգնություն կանչելու:

Յեվ այդպես ել յեղավ. կարճ ժամանակից հետո ինձ մոտ յեկան կարմիր բանակային սանիտարները. շունն առաջնորդում եր նրանց: Ինձ դրին պատգարակի վրա ու տարան: Սանիտար շունն ինձ փրկեց մահից:

19. Հոկտեմբերիկին

Հոկտեմբերիկ, դու գանգրամադ,
յերբ չափահաս մարդ կդառնաս,
կլինես ակտիվ քաղաքացի՝
և պայքարող, և շինարար:

Այժմ կարդա՛ և զարգացի՛ր,
առաջ գնա արագ-արագ,
չե՞ վոր քեզ ե վիճակվելու
այնքան փայլուն մի ապագա:

20. Աշուն

Աշնանային քամիները փչեցին,
ծառ ու ծաղկունք տերևները թափեցին,
յերկինք մռայլ, գիշեր-ցերեկ ամպամած,
սար ու ձորեր մեզ-մառախուղ ե պատած:

Ամայացան դաշտ ու անտառ, այգիներ,
թռչունների ուրախ յերգը դադարեց,
խոպանացան աղմկալի ճամբաներ,
ու սայլերի անցուղարձը ընդհատվեց:

Խառնուկ

Չիւ գնայ՝ թափը մնայ:

21. Յերկու աշակերտ

1. Ծուլի որագրից



Դեկտեմբերի 2-ին

Դպրոց չեյի գնացել,—ատամներս ցավում եյին:

2. Ուսման հարվածայինի գործը



Դեկտեմբ. 11-ին

Ուշացել եյի դպրոցից, — ժամացույցը սխալ եր:





Դեկտեմբ. 17-ին
Դարոց չգնա-
ցի,—փորս եր
ցավում...



Դեկտեմբ. 20-ին
Գնացի—յետ յե-
կա,—ընկերներս
արդեն նստուն եյին
գնացել:



Դեկտեմբ. 27-ին
Մայրիկս տանը
չեր. Նունիկին
եյի նայում...



* * *

Շոգերն անցան, պտուղները քաղեցին,
հացով, մրգով ամբարները լցվեցին.
յերկինքն ամպեց, բարակ անձրև ե մազում,
մերկ դաշտերը և ծառերը վողոգում:

Ե՛յ, ե՛յ, ե՛յ—աշուն ե,
տեսե՛ք, ի՛նչպես նախշուն ե:

22. Յերեկ ու այսօր

Յերեկ այստեղ վայրի լեռներ եյին.

Այսօր խորհրդային գործարանն ե բարձրա-
ցել:

Յերեկ ամայի դաշտեր եյին փովել.

Այսօր աճել ե խորհրդային տնտեսությունը:

Առաջ, յերբ նայում եյիր սավառնակից, դաշ-
տերը նմանում եյին կարկատած վերմակի—
գուլյն-գյուն կտորներ՝ քառակուսի, յեռանկյունի,
սեպաձև շերտեր... ու ամեն մի կտորի վրա մի
տեր եր նստեր:

Այժմ լայն տարածվել են կանաչ գորգերը:
Տրակտորները ջնջեցին սահմաններն, ու դաշտերի
կտորները ձուլվեցին, միացան—կոլխոզի ընդար-
ձակ դաշտերը դարձան:

Ուր առաջ գետակն եր խոխոջում, այնտեղ
ելեկտրոկայանն ե գղրղում:

Ուր ճահիճներն եյին փտում, այսօր բամ-
բակն ե ծաղկում:

Մութ ծմակներում սղոցարանն ե գործում.
նրան ողակում ե նոր կառուցած յերկաթուղին:

Ու ամեն տեղ բանվորներ, մեքենաներ...
ծուխն ե բարձրանում, շողին հոնդում, մոտորը
թնդում. ամեն տեղ յեռում ե աշխատանքը, ու
կառուցում են, կառուցում են անվերջ:

23. Զրահագնացքը

1.

Մի գիշեր, յերբ զրահագնացքում հավաքվել է յին զեպոյի բանվորները՝ Շիրակի գյուղացիների ու բանվորների հետ զրույցի, ներս մտավ բառակ Գեվոն: Նրան վաշտի բայջիկներն ուղարկել էին Ալեքսանդրապոլ (այժմ՝ Լենինական) ապրատամբոթյան ծրագրին մասնակցելու:

— Յես լիադրված եմ հայտնելու, վոր զինվորական մասերը պահանջում են ապստամբել վաղը յերեկոյան: Խոսքը՝ պատկանում է զրահագնացքին, — ասաց բառակ Գեվոն:

Ղեկավարը շեշտեց վճռական ձայնով:

— Զրահագնացքն իր ամբողջ կազմով պատրաստ է պարզել ապստամբոթյան դրոշմ: Հետաձգելը հանցանք է:

Ուրախությունից բոլորի մարմինը փշաքաղվեց: Ժողովը յերկար ժամանակ քննում էր ապստամբոթյան հարցը: Բոլորն էլ իմացան իրենց անելիքը և գուրս յեկան դնացքից:

Դուրսը խաղաղ էր ու լուռ: Զրահագնացքը փայլում էր լուսնի շողերի տակ: Լսվում էին միայն պահակի համը ու համաչափ քայլերը կայարանի ավազների վրա:

2.

Մյուս օրը, Ռազմահեղափոխական Կոմիտեյի հանձնարարությամբ, բառակ Գևոն վերադարձավ Յերևան: Իսկ զրահագնացքը շարունակում էր տենդային աշխատանքը:

Ղեկավարը հրամայում էր.

— Պահեստի բոլոր վազոնները լցրեք ուռմբերի ու գնդակների արկղներով: Սպահովենք շոգեմեքենան նավթով ու մագուլթով:

Զինվորները կարգի եյին բերում և յուզում թնդանոթներն ու գնդացիքները: Վազոններից մեկում պատրաստում էին ապստամբոթյան կարմիր դրոշմ:

Ալազյաղի գագաթը նոր եր շառագունել, յերբ զրահագնացքի թնդանոթներն ու գնդացիքներն սկսեցին պտտվել շոգեմեքենան մոնչաց, ապա սուլեց զեպոյի շչակը: Սմենամեծ թնդանոթը վորոտաց ապստամբոթյան ազդանշանը:

Շիրակի դաշտն արձագանգ տվեց այդ վորոտին, թնդացին հազարավոր սրտեր, գյուղերը վորտքի կանգնեցին:

Լույսը բացվեց: Ալեքսպոլի մի քանի հիմնարկների գլխին ծածանվում էին կարմիր դրոշներ: Ամբոխը լցրել էր փողոցները: Զինվորներն ու բանվորներն շտապ-շտապ անցուղարձ էին անում:

Բազմությունը խռնվեց դեպի կայարան.

Զրահապատը կարմիր դրոշներով ու կանաչ ճյուղերով եր զարդարված:

Կայարանում գտնվող զորքերը, բանվորներն ու գյուղացիները հուզված գոչում էին.

— Կեցցե Խորհրդային Հայաստանը...

24. Հավատարիմ ընկերը

1.

Յերեխաները շրջապատեցին հորը և խնդրեցին մի բան պատմել:

— Լա՛վ, դե լսեցե՛ք:

Յերբ յես յերեխա եյի, խնդրեցի մայրիկիս, վոր թույլ տա Ափուլի հետ գնամ գետի ափը խաղալու: Նա թույլ տվեց:

— Ո՞վ եր Ափուն, — հարցրին յերեխաները:

Նա մեր տան բարեկամն եր և իմ խաղընկերը:

Յես և Ափուն գնացինք գետի ափը. յես ջրի յերեսը մի տախտակ գցի. տախտակն այս ու այն կողմն եր գնում, մենք նայում եյինք ու զվարճանում:

Քիչ հետո տախտակը շատ հեռացավ ափից. ձեռքիս փայտով չեյի կարողանում տախտակը յետ քաշել:

2,

Ափուլին ասացի, վոր ջուրը մտնի և տախտակը դուրս քաշի:

Ափուն չկատարեց իմ ցանկությունը. յերբ



նրա վրա բարկացա, թողեց փախալ: Յես ել մի փոքր քար վերցրի և գցի Ափուլի յետևից:

— Վա՛յ, այդ ի՞նչ արեցիր, — գոռացին յերե-

— Ափուն ծփաց և ընկավ գետնի վրա: Յես ոգնության չգնացի — մտա գետը, վոր տախտակը հանեմ: Ջուրը խոր եր, յես առաջ եյի շարժվում, վոր հասնեմ տախտակին: Ընկա ամենախոր տեղը. քիչ եր մնում խեղդվեյի, սկսեցի ոգնության կանչել հորս, յեղբորս... ու ել վոչինչ չեմ հիշում: Հանկարծ զգացի, վոր մեկը քսվում ե ինձ: Յես փաթաթվեցի, և նա լողալով ինձ դուրս հանեց ջրից: Յետ նայեցի — Ափուն եր:

— Ա՛, ինչ լավն ե յեղել քո ընկեր Ափուն, — բացազանչեց Վանիկը:

— Դու ի՞նչ ասացիր նրան, հայրիկ, — հարցրեց Լուսիկը:

— Յես ձեռս գցեցի նրա վզովը, լաց յեղա և ներողություն խնդրեցի:

— Իսկ նա՞ ինչ ասաց, — հարցրեց Վանիկը:

— Նա հա՛Ֆ, հա՛Ֆ արավ:

— Դե ճի՛շտ առա, հայրիկ, — խնդրեցին յերեխաները, — ո՞վ եր քո ընկերը, Ափուն:

— Նա մի շուն եր, մի լավ, հավատարիմ շուն:

25. Մեր շունը

1.

Ձմրան մի գիշեր, յերբ մեր տանը բոլորս խոր քնած եյինք, հանկարծ զարթեցինք ինչ-վոր ձայներից: Մեկը դիպչում եր դռանը, չանգռում, մոմոոցի նման ձայներ հանում:

Մայրս զարթեցրեց հորս:

— Տես մի են ի՞նչ ե, — ասաց նա:

— Շունն ա,—հարցրեց հայրս, ապա վեր կացավ ու գնաց դեպի դուռը:

Բայց մայրս չթողեց դուռը բանալ:

— Կատաղած շուն կըլի, ամա՛ն, բաց մի անի:

Հայրս լուսամուտի մի փեղկը բաց արավ ու գլուխը դուրս հանեց:

— Մեր շունն ա, կապը կտրել ա...

Չալանկը կլանչեց ու դարձյալ դռնովը դիպավ:

— Քեզ պես հաղարն ըլի, ես ցրտին դուրս չեմ դա,—ասաց հայրս ու մտավ անկողին:

Շունն ավելի անհանգստացավ. տեսնելով վոր ձայն չենք տալիս, շարունակում էր շանգուտոցն ու կլանչը:

— Յես կարծում եմ՝ դեւ ա տեսել—ասաց հայրս հագնվելով:

— Դե վոր եղպես ա, թվանք վերցրու,—խորհուրդ տվեց մայրս:

Հայրս հագնվեց ու վերցրեց թվանքը:

— Դու ել վեր կաց, ա՛յ վորդի,—ասաց մայրս:

— Վեր կաց, ճրագը վառի, հորդ հետ գնա: Դեւերը ճրագի լույսից վախենում են:

Ճրագը դոռա, վառեցի և հորս հետ դուրս յեկա:

Դուռը բաց արինք թե չե, Չալանկը կապի կտորը վզին դիպավ հորս վոտքերին, կլանչեց ու առաջ վազեց:

2.

Յուրա եր. ձյուն... գետինը, տանիքները, պատերը, ծառերը—ամեն ինչ ծածկված էր ձյուն-

նով... Թեև անլուսին գիշեր էր, սպիտակի վրա ամեն ինչ յերևում էր պարզ,—բայց գայլ չկար: «Յերևի գոմի մոտ ե», մտածեցի յես:

Հայրս ու յես գնացինք շան յետևից:

Չալանկը գոմի դռան առջև կանգնելով, սկսեց կլանչեր:

Հայրս անմիջապես բացեց գոմի դուռը, և յերբ մտանք ներս—մեր աչքին պարզվեց հետեւյալ տեսարանը:

Մեր մեծ կովը ծնել էր. հորթն աղբի մեջ ընկած մզգում էր և ուզում էր բարձրանալ: Իսկ մայրը բառաչելով՝ անհանգիստ շուռ էր գալիս յերկու կողմի վրա, կապը ձիգ տալիս՝ դունչը հորթին հասցնելու... Ու չեր կարողանում:

Հայրս իսկույն վերցրեց հորթը, մաքրեց, աղ արավ ու դրավ մոր առաջ: Չալանկն ուրախ-ուրախ կլանչելով թռչկոտում էր դեռ ու գեն, կրտրած պոչը շարժում:

— Ա՛յ կեցցես, Չալանկ,—ասում էր հայրս նրա գլուխը շոյելով:

Պարզվեց, վոր Չալանկը դրսից լսելով գոմում կատարվող անհանգստությունը՝ կապը կտրել—յեկել էր մեզ իմացնելու:


Այդ որվանից մենք սկսեցինք սիրել Չալանկին ու առանձին հոգատարություն ցույց տալ:

26. Քաղաքը գիշերով

Գնացքը քաղաք հասավ գիշերով: Վազոնի պատուհանից դուրս նայեցի: Կայարանում իրա-

րանցում եր. մարդիկ անհանգիստ դես ու դեն եյին գնում: Անցնում եյին բեռնակիրները. մենք դուրս յեկանք վագոնից ու շտապ-շտապ գնացինք—անցանք դահլիճն ու յելքի դռնով դուրս յեկանք փողոց:

Յերկինքը սև եր: Խափարի միջով վերեւ փայլում եյին մանրիկ աստղերը. ներքեւ՝ փողոցներէ յերկու կողմից մեծ-մեծ արեւներ եյին վառ-



վում—ելեկտրական ճրագներն եյին: Փողոցներով արագ-արագ անցնում եյին կառքեր, ավտոներ, տրամվայի վագոններ. մայթերով մարդիկ եյին անցնում:

Ադմուկ եր, յեռուղեռ:

Ելեկտրական առատ լույսերը վողողել եյին հրապարակները: Միլիցիոներները կանգնած եյին տեղերում: Կինոների առջև ելեկտրական լապտերից լույսի փնջեր եյին թափվում:

Անցնում եյինք բարձր տների կողքով. շատ եյին տները, խիտ ու սև եյին յերևում պատերը, տանիքն, ամեն ինչ. պատուհաններից լույսեր

եյին յերևում: Սև եր քաղաքը. ելեկտրական լույսը կարծես խազմգել եր քաղաքն իր վառ շողերով: Հիշեցինք ճամբարն, ուր մենք հանգստանում եյինք ամառվա շոգերին:

27. Յերկու ընկեր

Յերկու ընկերներ իրիկնապահին հրացան առած՝ անտառ գնացին,

վոր մեկ բան վորսան,

շուտով յետ դառնան:

Հանկարծ անտառից մի արջ դուրս պրծավ ու կատաղությամբ նրանց վրա վագեց.

մեկն շտապելով ծառը բարձրացավ,

մյուսն անճարացած՝ գետնի վրա պառկեց,

շունչն իրեն քաշեց

ու անշարժ մնաց,

վոր արջը կարծե,

թե նա մեռած ե:

Արջը մոռաչով մոտեցավ նրան,

ականջը կամաց դրավ բերնի վրան,

ականջ դրեց,

հոտ քաշեց,

վերջապես նրան մեռած կարծելով,

հեռացավ գնաց՝ դունչը լիզելով:

Փախած ընկերը ծառից իջավ ցած,

ընկերին հարցրեց, թե արջն ինչ ասաց:

— Արջն ինձ պատվիրեց, վոր յես մյուս անգամ

քեզ պես մարդու հետ վորսի չգնամ,
վոր մեզ մի վտանգ-բան պատահելիս՝
մենակ չթողնես ու ինքդ փախչես:

28. Պետիկի զեղատումը

Լուսիկն արդեն առողջացել էր՝ այսօր վերջին անգամ սպասում էր ին ընկնի։ Մեկ էլ թըխկ-թըխկ... դուռը ծեծեցին։

Ներս մտավ լուսիկի յեղբայրը՝ փոքրիկ Պե-տիկը։ Նա հագել էր հոր վերարկուն, աչքին գրել պապիկի ակնոցները...

Բոլորը փոթկացին, բայց Պետիկը չզիտթվեց՝ գլուխ տվեց ու ժպտալով ասաց.

— Բարե՛ ձեզ, հիվանդս ի՞նչպես ե։

Աթուռը քաշեց մահճակալի մոտ, հագաց ու նստեց։ Ժամացույցի տեղ գրպանից հանեց մի կլոր տուփ, բռնեց հիվանդի յերակն ու ականջը դնելով հիվանդի կրծքին, սկսեց ուշի-ուշով լսել՝

— Լուսիկս ի՞նչպես ե, — հարցրեց մայրը.

— Վոչինչ, միայն չմբռնեմք, — պատասխա-նեց փոքրիկ բժիշկը, անցավ սեղանի մոտ ու սկը-սեց զեղատումս գրել.

— Տեսե՛ք, յերկու տեսակ գեղ եմ գրել. մեկը՝ մաւաքա, փոր կրնդունի թեյի գգալով՝ առավոտ յերեկո, իսկ մյուսը՝ մոմպասի կլոր հաբեր են, չորս-չորս հատ բերանն ե գցելու։

— Մոմպասի հաբերը շատ չե՞ն, ընկեր բժիշկ, — ծիծաղը հաղիվ գապելով հարցրեց մայրը։

«Բժիշկը» նեղն ընկավ, բայց պատասխանը դատավ.

— Ը... ը... մոմպասի հաբերը շատ քաղցը են։ Իսկ յեթե Լուսիկը չկարողանա բոլորն ընդու-նել, կեսը թող իր յեղբորը՝ Պետիկին տա...

Բարձրագույն մեծ պատիվ է ձեռք բերել ու ապագա

Հանկարծ դուռը թխկաց ու ներս մտավ բժիշկը։

Մեր Պետիկն իր զեղատումն առավ ու դուռս ծկվեց։

29. Յերկու մեքենա

Այս դեպքը պատահեց Ամերիկայում. բանվոր Ամիտը սուռն յեկավ զժգոհ.

— Ի՞նչ ե պատահել, հայրիկ, — հարցրեց փոր-դին։

— Գործարանը նոր մեքենա բերին. նա իմ գործն ե անելու, պտուտակներ ե կտրելու։

— Ել ինչու յես զժգոհում. չե՞ փոր դու ինքդ եյիր ասում, փոր աշխատանքդ ծանր ե։

— Առաջ ծանր եր, իսկ այժմ փոշ մի աշխա-տանք չեմ ունենալու։ Գործարանատերը դուրս ե շարտում յերկու հարյուր բանվոր։ Նրան շատ ձե-ռընտու յե մեր փոխարեն մեքենաներ բանեցնել. մեքենան եժան գործ ե տալիս. մեքենան չի զըժ-գոհում, այլ հլու հպատակ ե տերերին։ Այժմ մենք քաղցած ենք մնալու։

Իսկ ԽՄՄ-ի քաղաքներից մեկում կոմյերիտ բանվոր Կիմս ուրախ-ուրախ տունն յեկավ ու հայտ-նեց.

Նոր մեքենա բերին. նա շատ ավելի լավ ե կտրում պտուտակները, քան թե ձեռքի աշխա-տանքը. յերկու հարյուր բանվոր ազատվում են. ինձ փոխադրեցին ուրիշ աշխատանքի։

— Իսկ մյուսներին հեռացնում են, ի՞նչ ե, — հարցրեց մայրը։

— Ինչպե՞ս... Ինչո՞ւ հեռացնեն. մեր յերկ-
րում ամեն մի բանվոր իր տեղն ունի, ամեն մի
ձեռք անհրաժեշտ է: Ով մի գործից դուրս է գա-
լիս, մի ուրիշ աշխատանքի յե անցնում:

30. Կառուցողներ

1

Բանվորները,
կառուցող
աշխատում են
միասին.
վոմանք փայտ են
սղոցում,
վոմանք քարեր
են ուտել...

2

Պարուն, ամառ—
ամեն որ,
ժամը յոթին,
քրանաթոր
աշխատա՞քի
յեն գալիս
ճարտարապետ
ու բանվոր:

3

Յերբ լինում է
ընդմիջում
ու դանդն է զիլ
դողանջում,—
ձայն են տալիս
իրարու
ու նստում են
թեյելու:

4

—Վարպետ Խեչո՛,
մի՛ տաշի,
—Կարո՛, թեյը
դես քաշի:
Թեյից հետո
յեռանդով
վեր են յելնում
միասին:

5

Յեվ տաշում են
քարերը,
շարում ելի
նոր պատեր:

բարձրանում են
որ-որի
մեծ ու ամուր
նոր շենքեր:



31. Ձմրան ճանապարհ

Ձմեռը հանաք չի անում, բռնել է ամառի,
ձյունո դաշտերը. նայում ես ու չես ջոկում ան-
ծայր դաշտերն սպիտակ ամպերից:

Ու նայում ես—աջ, ձախ, վերև, ներքև—ամեն
տեղ նույնն է՝ ձյո՛ւն, ձյո՛ւն, ձյո՛ւն:

Բուքը խաղում է դաշտերում, ձյունի սյու-
ներ է պտտացնում ու քշում նրանց ամպի քու-
լաների պես:

Դժվար է այսպիսի ժամանակ մենակ գնալը.
ինչքան ես ուրախանում, յերբ հեռվից լսում ես
սահնակների ճռճուցն ու ձիերի վզից կախած

զանգակների ձայնը: Միրող հանդարտանում ե,
յերբ տեսնում ես սահնակների շարանը, փորոնց
կողքից, տաք մուշտակներում փաթաթված՝ քայ-
լում են տերերը:

Ձիերի գունչն ու աչքերը պատած են յեղյա-
մով:

Սահնակատերերը թափահարում են հաստ թե-
վերը և մեղմ ձայնով սիրտ են տալիս ձիերին,
փաղաքշում նրանց:

— Դե՛, մատաղ, շարժվի՛ր:

Ձեռ ուզում բաժանվել, հեռանալ սահնակների
կողքից:

Իսկ ցուրտը սաստկանում ե. բուքը ծածկել ե
ճանապարհը. գյուղացու բեղերից սառցի սուլուլակ-
ներ են կախվել. զծված ե բերանը բանալ ու խոսել:

Գլուխդ կոխում ես տաք մուշտակի մեջ, կուչ
զալիս սահնակի խորքում ու աչքի տակով նայում՝
չի՞ յերևում գեռ քաղաքը: Գեղ սիրտ ես տալիս
այն հույսը, թե քիչ ել համբերիր, տուն կհաս-
նես ու կնստես տաք փռաբանի մոտ, թշնացող
ինքնայեռի կողքին...

32. Փոքրիկ գյուղացին

Մի անգամ, ձմռան ճրճըճրճան ցրտին
անտառից յելա—սառ-սառնամանիք.
տեսա՛ն անտառից գեպի սարնիվեր
դանդաղ զալիս ե ձին՝ ցախը բարձած:

Ընկած առաջը տղամարդու պես՝
քաշում ե սանձը մի փոքրիկ տղա՝

մեծ կոշիկներով, մուշտակը բրդոտ,
ձեռնոցները մեծ, ինքը՝ թիզ ու կես:

— Բարե՛, յեղբայրա:

«Գնա՛ քո ճամպեն».

— Դու շատ խիստն ես, ինչպես տեսնում եմ.
Վո՞րտեղից բարձած բերում ես ցախը:

«Ի հարկե՛ մերուց: Հայրս, լսո՞ւմ ես,
կտրում ե այնտեղ,
յես ել կրում եմ»:

— Ե ինչ, շա՛տ մեծ ե ձեր ընտանիքը:

«Այո՛, փոքր չի, բայց տղամարդիկ
միայն յերկուսս ենք, հայրիկս և յես».

— Այ թե բանն ինչ ե: Անո՛ւնդ: «Պողո՛ս»:

— Տարիդ քանի՞ս ե:—«Յոթս անցել ե»:

— «Դեհ, ջանա»,—գոչեց փոքրիկը ձիուն,
թափ տվեց սանձն ու արագ քայլեց:

33. Ով ինչպես ե ուտում

Մենք պատառաքողներով ենք ուտում, իսկ
չինացիք ուտելիքը փոքրիկ փայտիկներով են
վերցնում:

Հապա կենդանիներն ինչպես են ուտում:

Աշխարհում կանայնապիսի կենդանիներ, փորոնք
իրենց զավակներին տեղավորում են հենց ուտե-
լիքի մեջ: Այսպես, խնձորի փորոն ապրում ե
խնձորի մեջ՝ առանց փորեի հոգաի. նրա կերակուրն
իր շուրջն ե: Բայց մեծ մատամբ շատ ճիգ ու

Ղանք պետք է թափի կենդանին ուտելիք ճարե-
լու համար և, այդ դեռ բավական չէ, շատ պետք
է շարձարվի այդ ուտելիքն իր բերանը գցելու
համար: Յեթե ձուկը մի մեծ պատառ կտրի, ել
չի կարող յետ տալ բերնից. թեկուզ խեղդվի եւ
պետք է կուլ տա:

Յեղել են դեպքեր, յերբ լորտուները շատ
մեծ մուկ կուլ տալուց տրաքել են: Ձկնկուլը
պիտի կարողանա բռնած ձուկը գլխի կողմով կուլ
տալ, ապա թե վոչ՝ ձկան ծակող լողնակները նրա
կոկորդը կխրվեն:

Շներն ու աղվեսներն ուտելիքն աստամներով
են բռնում: Ուղտը ճյուղերը վերին շրթունքով է
պահում, ինչպես մատով: Փիղն իր կնճիթով է
ուտելիքը վերցնում. նա ջուր ել է հավաքում կնճի-
թի մեջ, հետո կնճիթը կորացնում է և ջուրը դա-
տարկում իր բաց արած բերանը: Կան կապիկներ,
վորոնք ուտելիքը պոչի ծայրով են բռնում, թռ-
չունների բերնից ձվեր և փեթակներից մեղր պո-
չով են հանում:

Այսպես ուրեմն, կենդանիները զանազան կերպ
են ուտելիքը վերցնում,—վոմանք՝ աստամներով,
վոմանք՝ լեզվով, վոմանք՝ քթով, վոմանք ել՝
պոչով:

Սնունդներ

Սողվեսի վկան իր պոչն է:

Գեղն ամպ որը կուրախանա:


34. Գիքորի գործոր

Գիքորը ուներ
բազմաթիվ գրքեր՝
անկազմ, ճղոտած
կողքերը պոկած:
Ուշք չէր դարձնում
նա իր գրքերին,
գրքերը կորչում,
փչանում էյին:
Մի անգամ կովեց
ընկերով հետ նա,
գիրքը շարտեց
ընկերով վրա.
գիրքը գզգզեց,
թերթերը թռան,
ցրբուցան յեղան,
փչացան, կորան:
Գիշերը յեկավ.

Գիքորը քնեց.
սենյակում խնկոյն
լուծյուն տիրեց:
Յեվ Գիքորն ահա
տեսավ յերազում,
վոր լեզու առած
գրքերը խոտում,
զրույց են անում
նստած միասին
իրենց անուրախ
զրույցյան մասին:
—Լսի՛ր, «Դոն Գիշտ»,
ինչո՞ւ յես փոշոտ:
—Վո՞նց ես ապրում,
«Շունն ու կատուն»,
մի ժամանակ
լա՞վ եյիր դու:

—Ե՛յ, «Ռոբինզոն» բարեկամ,
ինչո՞ւ կեղտոտ ես այդքան:
—Ո՞ւր եկազմդ, «Բա՛ջ Նազար»—
եզ ի՞նչ որի դու հասար:
—Բա ի՞նչ անենք,—հարցրին
գրքույկները միասին:
«Դոն քիշոտը» թե՛ տղերք,
յեկեք փախչենք ուրիշ տեղ.
փախչենք գրադարան
զո՞հ կլինենք անպայման:

Այնտեղ չեն թողնի,
վաճառ մեզ գողգոթն,
մեր գանգաւանները
այնտեղ կլսեն:
— Դե՛, առանձ, — ասաց
Դոն-Քիշոտը քաջ.
ու յերթի յելան
գրքերը հանկարծ:



Առավոտյան գրքերն ուրախ
իրենց շուրջը նայեցին. —
մաքուր կազմած, իրար կողքի
պահարանում շարված խիտ,
գրքերն ահա նայում են լուռ,
ժպտում են գոհ ու հանգիստ:

35. Հանելուկ

Մայրիկը Միշիկին մի հանելուկ առաջարկեց.

— Այն ի՞նչն է — ձմեռը տաք, ամառը սառն է
լինում:

Միշիկը մտածեցը, մտածեց — չգտավ:
Գնաց իր ընկերների մոտ.

— Այն ի՞նչն է, — հարցրեց, — ձմեռը տաք, ամառը սառն է լինում:

— Հացը ձմեռը տաք է լինում, — ասաց Պետրոսը:

— Աղբյուրներն ամառը սառն են լինում, — ասաց Հրանուշը:

— Չե՛, չեղա՛վ, — մտածեց Միշիկը, — տաք հացը հետո պուշում է, իսկ աղբյուրը ձմեռն այնքան էլ տաք չի լինում:

Ու դնաց մայրիկին ասաց.

— Այդպիսի հանելուկ յես չեմ կարող հանել:
Շատ կարճ է, համառոտ. ե՛լի մի բան ասա դրա մասին:

— Իմ հանելուկի մեջ քեզ համար քաղցրեղեն կա, — ասաց մայրը:

Միշիկը գիտեր, վոր մայրը քաղցրեղենը թըխում էր վառարանում. բացեց դուռը և տեսավ կարմրած-քաղցր խմորեղենը:

— Ա՛, հիմա իմացա՛ր այդ վառարանն է, վոր ամառը սառն է լինում, իսկ ձմեռը՝ տաք:

Յեվ Միշիկն սկսեց վայելել կլոր, քաղցր խմորեղենը:

Խախտուկներ

1. Ծնվեց հողի մեզ, աղխարեց,
դրի մեզ ու մեռավ չեռֆի մեզ:

2. Չերկուս վարկան, չորս հար
վապան, մեկ շրմիան:

36. Կադրնու տնվորները

Մեր ծեր կադրին իր հին տունը
ափել է չորս տնվորի:
Արմատի մոտ՝ ներքնատունը
մուկն է բռնել այս տարի:

Ատաղձագործ ժիր փայտփորը՝
ցածի հաբկի խանութում
աշխատում է ամբողջ ուրը—
թակում, կտցում, ծակոտում:

Իսկ վերեի հաբկում նեղլիկ
շեկ սկյուռն է բնակվում՝
կաղին, ընկույզ, սերմ ու հատիկ
գիգած իր լի փշակում:

Թավ ճյուղքումը դրել է բուն
մի գիլ յերգիչ դուրալի.
ու ճլվլում է որն ի բուն
իր յերգերը սրտալի:

37. Կոլխոզի դաշտում

Այս դաշտում այնքան ծաղիկ է ծաղկել,
այնքան շուշաններ ու վարդեր սիրուն,
այս դաշտում այնքան զարուն է բացվել,
բայց այս զարնան պես չի յեղել զարուն:

Այս դաշտում այնքան արորն է բանել
այնքան ճուռացել գութանը փայտե,

բայց յերբ պողպատը գյուղն է ներս մտել՝
դաշտն է տոգորվել յերգով յերկաթե:

Այս զարուն այստեղ կոլխոզն է բանում,
ու կծածանին արտերը հասուն,
ու աշխատանքը նորից կթնդա,
յերբ դաշտում իջնի բերքաշատ աշուն:

38. Կռիվ պետի հետ

1

Բանվորները գետին ասացին.
— Գիտե՞ս մեր վորոշումը քո մասին.
յեկել ենք ահա մենք՝
պատով առաջդ փակենք:

Դու պիտի
բարձունքից թռչես,
դու պիտի
մաշիններ շարժես.
— Վո՛չ, — մոռնաց ջուրը,
յես ձեզ չեմ լսի:

Չե՞ս լսի...

սպասիր.

ընկերներ, դնենք գետի առաջ
յերկաթե պատ:

Յե՛վ սկսվեց

մի մեծ կռիվ,


իրարանցում:

Մտավ կռվի մեջ


հսկա կլանը,

3

... քրանդոմտով մերցոյ
 (դաքլոտոս զգ յրախո մտոմ
 մեզգիջ զլիգ յրախոս
 իզմզի նգտմախ յրաադի զի՞ն
 մեզգոտգրծգր
 զգ յրախմեռ մտոմ
 մեզգիչիչիզ զլիգ յրախոս



Կգմզմ մաս Լգտղմ իգց
մմգիտղ
Գգ յրատտղմ մտղմ



Վճարեցին ինքն ինքն իրենց
հարկերն և արտադրության ծախսերն

2

Եղիմոսն աս Եղիմ
 Յգիկո Նաղիկոս
 Եղապետիկոս Խանի
 Նոր փրակի Խոս
 ...ոյն Եղիկո Եղիմ
 Եղ Եղապետիկոս Խան

Մեր վառ աշխարհի ամեն մի մասում
շրջում ե նա միշտ ու միշտ.
ուր հազար-հազար մանկիկներ հասուն
այժմ խլրտում են անվիշտ:

Պիոներական գնդերն են հուզված,
թմբուկն ե թափով թնդում.
Իլյիչը հիմա շարքերին ձուլված—
յերգում ե, հուզվում, խնդում:

Յեվ փոքրիկ-փոքրիկ հոկտեմբերիկներ—
դեռ թոթով, թիթեռ, անուժ.
Լենին պապիկը ժպտում ե հետներ
ու շոյում նրանց անուշ:

Դու, թուխ ու թոթով, թմբիկ թմբկահար,
թող թմբուկդ թունդ թնդա՛,
Իլյիչի հետը թող սավետական
մեր լայն աշխարհը խնդա...


40. 1924 թ. հունվարի 21

Մոսկվայից վոչ հեռու, Գորկայում, 1924 թ.
հունվարի 21-ին մեռավ Վլադիմիր Իլյիչ Լենինը.
նրան թաղեցին Մոսկվայում:

Խիստ ցուրտ եր, սակայն փողոցները լիքն
եյին:

Բոլորը գալիս եյին հրաժեշտ տալու իրենց
մեծ առաջնորդին, սիրելի ղեկավարին:

Յերբ դադաղն իջեցրին գերեզման, մեր վողջ
յերկրի գործարանների շահները շաղին, գնացք-
ներն ու նավերը կանգ առան:
Հիմարկները փակ եյին. լույսերը հանգան



ամեն տեղ. անցորդները չեյին շարժվում փողո-
ցում, ճանապարհին:

Կյանքը կանգ առավ վողջ յերկրում:
Ու հինգ րոպե անընդհատ շշում եյին շահ-
ները...

41. Վլադիմիր Իլյիչի հետ սանատորիայում
(1918 թ.)

Մի անգամ հայրիկս սանատորիա գնաց Վլ.
Իլյիչի հետ տեսակցելու. ինձ ու յեղբորս ել հետը
վերցրեց: Յերբ տեղ հասանք, յես և ընկերուհիս
սկսեցինք այգում խաղալ, իսկ հայրիկս խոսում
եր Իլյիչի հետ:

Հետո մեր խաղին միացավ Վլ. Իլյիչը. մենք
խփում եյինք իրար ու փախչում. յետեից վազե-
լիս յես պինդ բռնեցի Վլադիմիր Իլյիչի թևը. նա
պոկ յեկավ ու սկսեց ծիծաղել ինձ վրա՝ ասելով.
— Ձբոնեցիր, չբռնեցիր:

Յես հարցրի.

— Ինչպե՞ս թե, չե՞ վոր բռնել եմ:

Բայց նա պատասխանեց.

— Ի՞նչ վոչ թե ի՞նձ բռնեցիր, այլ իմ բաձ-
կոնի թևը, — ու փախավ:

Այն ժամանակ Վլ. Իլյիչի ձեռքը վիրավոր-
ված էր, նա իր բաձկոնի թևը չէր հագնում:

Այսպիսով, Վլ. Իլյիչին չկարողացա բռնել:

42. Բանտում

(Լենինի քրոջ պատմածից)

1895 թ. Վլ. Իլյիչը բանտարկված էր Պետեր-
բուրգում (այժմ՝ Լենինգրադ): Իլյիչը մեկը մյուս-
սից ավելի սրամիտ միջոցներ էր հնարում ըն-
կերեներին գաղտնի նամակներ գրելու: Վերադարձ-
նելով ստացած գրքերը՝ Իլյիչը վորոշ յերեսնե-
րին նշանակում էր սառերը կետերով: Այդ ցըր-
ված տառերը վորոշ կարգով արտագրելով՝ ընկեր-
ները կարգում եյին Լենինի նամակները:

Մի ուրիշ, ավելի հետաքրքիր միջոց, վոր
ցույց էր տվել մեզ մեր մայրը, կաթով գրելն
էր, վոր աննկատելի հետքեր էր թողնում և կար-
ողովում էր, յերբ թերթը տաքացնում եյինք

մոմի կամ լամպի վրա: Իլյիչը բանտում ամեն
որ կաթ էր ստանում: Հացի խմորից նա շինում
էր մանրիկ թանաքամաններ և մի քանի կաթիլ
կաթ ածելով մեջը՝ գրում էր գրքի տողերի ա-
րանքում. գաղտնի գրությամբ Լենինը հայտնում
էր, վոր գրքի այսինչ յերեսին կաթնազիր նամակ
է գրված: Այդ թերթերը բռնում եյինք կրակի
վրա, տառերը պարզվում եյին ու կարդացվում:

Թանաքամանները շատ փոքր էր շինում, վոր
չնկատվի, իսկ նեղն ընկած ժամանակ կարողանա
կուլ տալ: Ձե՞ վոր նրան հետևում էր պահակը
գուան նեղ անցքից: Իլյիչը պատմում էր, վոր մի
անհաջող որ նա վեց հատ թանաքաման կուլ տվեց:

«Չկա մի այնպիսի դժվարություն, վոր չհաղ-
թահարես վորեւէ հնարագիտությամբ», — ասում էր
Իլյիչը, և այսպիսի միջոցներով նա բանտում կա-
րողացավ գրել բոլորները, կոչեր, գրեց նաև
բանվորական կուսակցության ծրագիրը:

43. Աղվեսը

Աղվեսն յեկավ բարձր սարից,
հարցմունք արավ լիքը թառից.
«Մեծ խորոզ ե հարկավոր ինձ»:
Քաղցած աղվեսն, ագին ծաղիկ:

Աղվեսն հագել քուրքը դեղին,
պտույտ կտա շուրջը գեղին,
ջուր կարվեց տատիս լեղին:
Դեղին աղվեսն, ագին ծաղիկ:

Աղվեսն ասով պառավ տատին,
«մտիկ չեմ տա ձեռիդ փետին,
կարոտել եմ թըմբլիկ ճուտին»
Անվախ աղվեսն, ագին ծաղիկ:

Աղվեսն յեկել նստել դեզին,
յերկար ագին ծռել վզին,
աչք ե գցել մեր խորոզին
են գող աղվեսն, ագին ծաղիկ:

Մին ել կանչեց տատս պառավ.
«Աման, հասե՛ք, տարա՛մ, կերա՛մ,
գլխիս ես ի՞նչ փորձանք բերավ
անտեր աղվեսն, ագին ծաղիկ:

Ա՛յ իմ խորոզ, կարմի՛ր խորոզ,
ման կգայիր գողոզ-գողոզ,
փետուրդ արավ վողջ դար ու փոս
են չար աղվեսն, ագին ծաղիկ»:

Աղվե՛ս, աղվե՛ս, փոքրիկ գազան,
փոտներդ կարճ ու խիստ վազան.
շներն ամեն քեզ չհասան,
ճարպիկ աղվես, ագին ծաղիկ:

44. Մանչուկն ու Կուտիկը

1.

Յուրաքանչյուր քանի գնաց, սաստկացավ. ճոճոտն
սառնամանիք ե անում. թքում ես՝ գետին չի ընկ-
նում. քամին վզպալով դռներ ե ջարդոտում, տեղ-

տեղ փոթորիկը ձյունի սարեր ե դիզել. տանից
դուրս գալը վտանգավոր ե դարձել:

Ուսումնարանում մնացել են մոտիկ ապրող
սակավաթիվ մանուկներ. հեռու կենդանիքը չեն
գալիս:

Վարժուհին Մանչուկին լավ եր պահում. ել
ինչի՞ Մանչուկը պիտի վախենար ցրտից. — յերբ
սաստիկ բուք կամ ցուրտ եր լինում, գիշերները
տուն չեր գնում:

2.

Յերբեմն թեյի և ճաշի ժամանակ վարժուհին
կատակներ եր անում Մանչուկի հետ: Իսկ Ման-
չուկը նստում եր նրա դիմացը և լեզուն կախ
զցած՝ քարե տախտակի վրա տառեր եր գրում:
Կուտիկն ել այստեղ եր. պառկում եր ու խումփաց-
նում, մոմ ունի, կոզկոնձում...

Մանչուկի խելքն ու միտքն իր դասերի հետ
եր: Մեկ ել տեսնես՝ սկսում եր ժպտալով զծած-
ներին նայել: Ի՞նչ սիրուն են, ի՞նչ լավ են զըր-
ված. վնա՞սն ինչ, թե Ա-ի ատամները մի քիչ վա-
րդի ժանիքի նման ծուռ են. շատ հարկավոր ե,
թե ն տառը շան նման պզզել ե. նա սկսում ե իր
դասերի հետ բարձր ձայնով խոսել, մեկ-մեկ ուղ-
ղել:

— Կա՛ց, կա՛ց, դու եդ ինչի՞ յես դունչդ ցցել
ու բերանդ բաց արել. ամոթ չի՞, հիմի յես քո
ռևիթը կփակեմ... Հը՞, կերա՞ր, լա՞վ եր... Իսկ սա՞
ինչի յե պոչը կոացրել իմ Կուտիկի պոչի պես.
ա՛յ դու խորամանկ — հիմի յես քո ուտին կուտեմ:

Նա սաստում էր անհնազանդ տառին ու
դառնում վարժուհուն.

— Վո՞նց ե, վարժուհի ջան, լա՞վ ե...

— Լավ ե—սպասխանում էր վարժուհին ու
նորից գրքի մեջ թաղվում, իսկ Մանչուկը դար-
ձյալ իր գրիչն էր ճռճոացնում...

45. Դժվար աշխատանք

Քեռի Բեկին ծխնելույզ մաքրող ե. նա իր
տղային՝ փոքրիկ Զիմին ընտելացնում ե այդ
աշխատանքին:

Ամբողջ ուրը նրանք աշխատում են յերկնահաս
շենքերի կուռերների վրա: Նրանք յերկուսն ել սև
են, ինչպես ծխնելույզի պատերը:



Աշխատանքը ծանր ե, իսկ փոքրիկի համար
ուղղակի անտանելի յե:

Քեռի Բեկին յերկար պարանք կապում ե
Զիմի մեջքին և կախում նրան ծխնելույզի մեջ:
Զիմը փոքրիկ թաթիկներով մաքրում ե ծխնե-
լույզի պատերի մուրը:

Ծխնելույզից Զիմը դուրս ե գալիս բոլորու-
վին սևացած ու մրտաված:

Նա ագահաբար սկսում ե շնչել մաքուր ոդը:

— Սյտեղ լա՞վ ե, հա՛, Զիմ, — հառաչում ե
հայրը:

— Շատ լավ ե, — ասում ե Զիմն ու աշխատում
ուրախ յերևար:

Աշխատանքը ծանր ե, բայց Զիմն առանց
տրտունջի ոգնում ե հորը:

Նրանք միասին այսպե՛ս են հաց վաստակում
կապիտալիստական յերկրում:

46. Գիշերն անտառում

Են, ինչ վոր պիտի պատմեմ, հենց իմ գլխով
անցած մի դեպք ե:

Ճիշտ ե՝ արդեն յերեսուն տարի յե անցել
եդ որից, բայց մինչև հիմա ել հիշելի՜ս՝ մաղերս
փշաքաղվում են:

Դե՛, պատմեմ, լսեցեք:

Չորս սայլորդ եյինք. ապրանք եյինք տարել
քաղաք՝ վերադառնում եյինք: Հունվար ամիսն
եր: Նոքի մեծ անտառում մթնեց, պետք ե գիշե-
րեյինք բացատում:

Ցեղներն արձակեցինք, խոտ ու դարման տը-
վինք:

Ապա յերկուսով սկսեցինք չոր ճյուղեր կըտ-
րատել ու փայտ հավաքել, մյուս յերկուսը սայ-
լորդներն էլ:

կրակ վառեցինք, մեկը՝ յեղների այս կողմը, մյուսը՝ այն կողմը, վոր նրանք ել չմրսեն:

Հանեցինք մեր պաշարը, լավ կերանք, մոտիկ աղբյուրից ել կուշտ ջուր խմեցինք (անտառում ձմեռն աղբյուրները չեն սառչում), կրակին փայտ ավելացրինք և մեր յափնջինեում փաթաթված կրակի առաջ պառկեցինք:

Շատ ժամանակ եր անցել թե քիչ, չգիտեմ, մեկ ել Գրիգոր քեռին գոռաց.

— Վե՛ր կացեք, ա՛յ տնաքանդներ, դելանն յեկան. գլխներիդ ճարը տեսեք:

Վա՛յ, ինչ տեսարան եր... հեռվից լսվում եր գայլերի վոռնոցը. մեկը վոր սկսում եր, մյուսները շարունակում եյին. նրանց աչքերն ենպես եյին պսպղում, վոր կարծես յերկնքի աստղերն իջել եյին յերկրի վրա: Յեղները թողել եյին իրենց խոտը և մեջքերն իրար արած, գլուխները կախած, անհանգիստ դիտում եյին հեռուն ու փնջացնում:

Յես շատ վախեցա. վեր թռա, յափնջիս գցեցի ու չգիտեյի՝ ինչ անել:

— Կրա՛կը, կրա՛կը թեժացրեք,—կանչեց Գրիգոր քեռին, առանց իրեն կորցնելու:

Փայտ լցրինք, կայծերը յերկինք բարձրացան: Փայլերը շրջապատել եյին մեզ. կրակի լույսի տակ յերեւում եյին նրանց ահռելի բերանները. լսում եյինք նրանց ատամների չխկչխկոցը...

— Վա՛յ, Գրիգոր ջան, կորած ենք,—ասում եր վախկոտ Մելքոն ապերը:


— Իսկի մի վախենաք, վոչինչ չի լինի. մսի հոտ են առել անիրափները... ա՛յ մի հրացան լինել,

հա՛, ասում եր քեռին հանգիստ ու անվրդով:

Թե ինչքան տևեց ես սարսափը, չեմ կարող ասել: Լույսը հեռու յեր, իսկ գայլերի ողակը հետը հետն նեղանում եր... ու ենքան ել շատ եյին... յես յերեսուն ասեմ, դու քառասուն խմացիր:

Յերբ գայլերն ենքան մոտեցել եյին, վոր կարելի յեր փայտը շարտելով հասցնել նրանց, քեռին հրամայեց, վոր բոլորս միասին վառվող ածխակոթերը շարտենք գայլերի վրա:

«Դե շո՛ւտ» վոր ասեց, բոլորս ել վառվող փայտերը շարտեցինք գայլերի վրա: Նրանց մեջ իրարանցումն սկսվեց ու յետ-յետ գնացին: Եդ միջոցին քեռին վերցրեց մի անագին վառվող ձող



և ուղղակի հարձակվեց ամենամոտ գայլի վրա: Սա սոսկալի վոռնոցով սկսեց փախչել, մյուսներն իսկույն հետևեցին նրան: Դու մի ասիլ—քեռին գիտեցել ե, թե ես մեկը վոհմակի առաջնորդն ե, ու հենց նրան պետք ե փախցնել:

Հինգ րոպեից հետո գայլերի վոռնոցը կտրվեց:

— Ել չե՛ն գալ, անհանգիստ մի՛ լինիք,—ասաց

քեռին.—տեսն'ք, յեղներն ինչպես ուղղվեցին ու սկսեցին խոտ ուտել:

Սպասեցինք... գայլերը չվերադարձան:

— Շատ յետ յեկածն ես, հա՛, Գրիգոր, —ասաց Մելքոն ապերը:

Իսկ Գրիգոր քեռին փաթաթվել էր յափնջու մեջ և արդեն հանգիստ խումփում էր:

47. Վոչ մի գայլ մեր հանդերում

1.

Վոչխարների կոտորածից հետո Տիկոյի խաղե-
յինը կատաղել էր. մենք բոլորս մի մարդու պես
կանգնեցինք մեր ընկերոջ թիկունքում ու պաշտ-
պանեցինք:

— Ել ե՛ն հին ժամանակը չի, խելքդ գլուխդ
հավաքիր, ինչ ա՛՛ փորձանքը հո Տիկոն չի բերել:

Տիկոյի խաղեյինը մի լավ հայոցեց ու սպան-
ված վոչխարները սելը լցրեց, տարավ:

Վրեժն ու կատաղությունը լավում, բորբո-
քում էր մեզ:

Վորոշեցինք՝ ինչ ել վոր լինի, են յերկու
գայլերին ել սպանել:

— «Վոչ մի գայլ մեր հանդերում» — ահա մեր
պիտներական — փորսորդական լոգունգը, ու վորո-
շեցինք գայլերի դեմ գործի գնել նաև թակարդն
ու դեղը:

Մյուս ուրը բերինք թակարդն ու մի քիչ ել
թույն: Թույնը շաղ տվինք մի քարափի ծակի
առաջ, կարծելով, վոր գայլի բուն ե, իսկ թակարդը

դրինք յերկու քարափի մեջ, վորտեղից ամեն դի-
շեր գայլերը գալիս եյին գոմերը, ձայն-ձայնի
տալիս ու վռնում:

2.

Յերկու որ անցավ: Դեռ վոչինչ չկա: Թակար-
դի միջի մսի կտորը սառել, քարացել էր ցրտից:
Մեր բախտից գայլերը նորից անհետացել
եյին:

Մի առավոտ, յերբ «գայլի բնին» մոտեցանք,
տեսնեմ կաղնի ծառի յետևից մի պոչ ե յերևում:

— Տղե՛ք, գելը դեզ ա կերել, ստակել, — գո-
չեցի յես ու վազեցի առաջ: Մի ահագին թափա-
մազ պոչ բռնեցի, քաշեցի — տեսնեմ՝ աղվես ե:

— Տո՛ խնամի աղվես, բարո՛վ — բարո՛վ, հը՛...
Մելքոն ապու մին ու ճար հավը վճնց անուշ ա-
րիւ: Խեղճ, ո՛վ գիտի — դեռ չի ել մարսել:

— Խեղճին կիսամուրազ արինք. ես վերունի
(վայրենի) տեղում հազիվ եր մի հավ ճարել, են
ել գլխին խոով արինք...

Աղվեսին քաշ տվինք գոմերը, մորթին տիկ
հանեցինք ու կախ տվինք գայլի, նապաստակների
ու կխտարի մորթիների մոտ:

3.

Չյունը ծնկներին ե հասնում. չոր ճախը փշր-
վում ե վորտեղիս տակ: Մոտենում ենք թակար-
դին. ահա քարը, սակայն թակարդը չկա, հանված
ե, ու հետքեր կան, կարծես քաշ են տվել, տարել:
Մեկ ել քարի տակից ինչ վոր շան ծմբոց եմ

լսում—մի անգլին պոչեր շարժվում։ Իջա ներքև, տեսնեմ՝ մի անգլին բաց բերան և մի գուլգ կատաղի աչքեր։ Իսկ և իսկ գայլ։ Ուրախության ճիչեր արձակեցի ու հարձակվեցի գայլի վրա։ Գայլը կանգ առավ, լիզեց վիրավոր թաթն ու ցատկեց իմ կողմը։ Բայց իզո՛ւր, թակարդը պինդ եր։

«Ես անտերը մի ոյին չհանի գլխիս»,—մտածեցի ու մագլցելով կաղնի ծառին՝ գոռացի.

— Հեյ, Տիկո՛... Վահա՛ն, հեյ...

Քիչ անց, ձորում լավեց շների հաջոցը, նրանց հետ ել՝ տղերքի աղմուկը։ Շները հասան ու անագին աղմուկով հարձակվեցին գայլի վրա։

— Տղե՛րք, սպասեցեք, պետք ե վողջ-վողջ բռնենք, գյուղ տանենք։ Դուք յետ քաշվեցեք,—ասաց Տիկոն։

Թողը թռավ ողում և մի ակնթարթում ողակը գրկեց գայլի վիզն ու սկսեց սեղմել։ Գայլն սկսեց քաշքշել պարանը, ատամներով ծվատել, բայց զո՛ւր... Չորս հոգով կախ ընկանք պարանից ու կիսաշունչ գայլին ձյունի վրայով քաշ տվինք զեպի գոմերը...

48. Հրաշալի տնակ

Մեր ուսուցիչը ցույց տվեց մի ընագիտական նկար—մարդու կազմվածքը—և ասաց.—սա մի տնակ ե, մի հրաշալի տնակ, վոր ունի իր բոլոր հարմարությունները. այստեղ կա խոհանոց, ուր զիշեր-ցերեկ տաք կերակուր ե սլատրաստվում։

Կա ջրաղաց, ուր աղում, մանրում են կերակուրը։ Շատ մուտքեր ու անցքեր ունի այս տնակը, վորոնցով ճարպիկ աշխատավորները տաք կերակուրը զեպի տան բոլոր անկյուններն են տանում։

Սյգ տունը տնտեսավար ունի, վոր վոչ մի բոպե չի քնում. զիշեր ու ցերեկ անընդհատ զարկում ե ու քշում բանվորներին տան բոլոր անկյունները։

Կա մի մեծ, ընդարձակ սենյակ՝ միշտ լի մաքուր ողով։ Լույսն անցնում ե յերկու լուսամուտներով, վորոնք զիշերը ծածկվում են փեղկերով։

— Հապա՛, ցո՛ւյց տվեք ինձ այդ տնակի մասերն ու նրա բնակիչները,—ասաց ուսուցիչը։

Դասն ընդհատվեց, ու մենք չիմացանք, թե վորոնք են «հրաշալի տնակի» մասերը։

Յերբ մեզ համար պարզվեց «հրաշալի տնակի» գաղտնիքը, մի քանի որ շարունակ զրույցներ եյինք ունենում մարդու մարմնի և նրա գործարանների մասին։

Մենք ուսումնասիրեցինք թոքերը, սիրտը, բերանն ու ատամները, ստամոքսը և այլն։

2.

Սյունեհտե մեր գասարանում «սանիտարական շաբաթ» հայտարարվեց։

Մեր բոլորի ուշագրությունը նվիրված եր գասարանի, մեր մարմնի և շրերի մաքրության։

Յերեք որ հետո բոլոր աղջիկները գալիս եյին կանոնավոր սանրված, իսկ տղաները մազերը խուզել եյին տվել։

Մեր պատուհանները շարունակ բաց եյին։

նում: Կարգադրված եր շարաթը յերկու անգամ լվանալ սպիտակեղենը և մի անգամ լողանալ:

Մի հատիկ փոշի չեյիք տեսնի սեղաններին, սլատուհանի գոգերում: Սպակիներն աչքան մաքուր եյին, վոր մի անգամ մեկը, կարծելով թե ապակի չկա, գլուխը ներս կոխեց և շրջիկ—ապակին իր գլխով կտարեց:

Բժիշկը մեզ համար մի դասախոսություն կարդաց, թե՛ «ինչպես պետք է պաշտպանվենք վարակիչ հիվանդություններից»:

Բոլորիս քննեցին, կշռեցին, չափեցին:

Ֆիզիկոս դասաւորուն ամենորոյա անհրաժեշտ մարզանքներ սովորեցրեց: Դասարանը, նախասենյակը, դահլիճը ծածկված եյին բազմաթիվ հայտաբարություններով ու պրակատներով:

Քեցե՛ք՝ ծուխն ու նանները, փռե՛ն մաքրեցե՛ք

49. Ս զ զ ա ն

Բլրակի լանջին ձյունը սառել եր: Հեռվից աչնպես եր պսպղում, պեծպեծին տալիս, կարծես մի մեծ հայելի լիներ՝ բլրի գագաթից մինչև ստորոտը:

— Տղերք, գնա՛նք սղալու, — ասաց Գեվորգն իր ընկերներին:

— Գնա՛նք, գնա՛նք, ասացին մյուսները և սղղաններն առած գնացին:

Անուշն ու Սինոն ել գնացին, թեև սղղան չունեյին:

Որը պարզ եր և ցուրտ: Մրեղակը բոլորովին չեր տաքացնում՝ յերեխաների սառած ձեռքերը: Նրանք կատակներ եյին անում, վազվզում, վոր չզգան ցրտի սաստկությունը:

Կարգով կանգնում եյին բլրակի գլխին և, սղղաններին նստած՝ սղղաններն իրար հետևից բաց եյին թողնում, սղղալով իջնում եյին մինչև ստորոտը և նորից բարձրանում:

Սղղան չունեցողները ծաղրում կամ քաջալերում եյին սղղացողներին:

— Սինո՛, Անո՛ւշ, յես հոգնեցի, յեկեք դուք սղղացեք, — ասաց Կոստին:

— Առաջ դո՛ւ սղղա, Սինո:

— Չե, դո՛ւ սղղա, Անուշ:

Վերջապես Սինոն զիջեց և սկսեց սղղար:

Յերբ յերկրորդ անգամ սկսեց սղղալ, հենց սկզբից սղղանը պատվեց և արագ թափով իջավ: Սինոն ճշում եր, ոգնություն եր կանչում: Ի՞նչ անեյին. յեթե մոտենային՝ պիտի ընկնեյին: Բոլորն ել կողքից վազում, վա՛յ, վա՛յ, եյին կանչում:

— Վա՛յ Սինո ջան, լաց եր լինում Անուշը և մոտից վազում:

Սղղանը տատանվում եր, պետք ե շուտ դար և խեղճ Սինոյին տակովն աներ: Մեկ ել են տեսանք, վոր Անուշն ամբողջ մարմնով մեկնվեց ճանապարհի վրա—սղղանի առջև:

Բոլորը զարմացած ճիչ արձակեցին: Սղղանը դեմ առավ Անուշին ու կանգնեց: Սղղանի ծայրը գիպավ Անուշի դեմքին և քիթ ու բերանը արյունոտեց:

Յնծու թյուռնն ընդհանուր եր: Բոլորը հավաք-
վել եյին Անուշի շուրջը և աշխատում եյին ձյու-
նով կտրել նրա քթի արյունը:

* * *

Որը կարճ է, արև չկա՝ լսար ցուրար է,
եւրանկ չյուսը փուլա-փուլա կրրդեա

50. Ինչպես սովորեցի ձի հեծնել

1.

Արդեն մի շաբաթ եր, վոր քաղաքից գյուղ
եյի յեկել, քեռուս մոտ:

Մի որ քեռիս դարձավ իր յերեխաներին, թե՛
«Յեկե՛ք ձեզ ձի հեծնել սովորեցնեմ. մեծացել եք,
լավ ժամանակն է»:

— Քեռի՛, բա յե՛ս. — դիմեցի նրան:

— Դե՛ւ. չե՛, Արամ, դու դեռ փոքր ես, կընկնես:

Յես հուզվեցի, քիչ եր մնում, վոր լաց լինեյի:

— Լավ, — ասաց քեռիս, — բայց տես, քաղա-
քացի, լաց չլինես հա՛, յեթե ընկնես: Մարդ, վոր
ձիուց չընկնի, ձի հեծնել չի սովորի:

Քիչ հետո արդեն Ջալալը բակումն եր:

— Պի՛նդ կացեք, տղե՛րք, — ձայն եր տալիս
քեռիս ու ձիու սանձից բռնած՝ տղաներին ման
եր ածում:

Հերթն ինձ հասավ. քեռիս մոտեցավ.

— Արամ, հիմա դու նստի՛ր, տեսնեմ:

Թե ուրախացա և թե վախեցա, բայց աշխա-
տում եյի, վոր չնկատվի: Շատ աշխատեցի՝ վոտքս

ասպանդակին դնել՝ չկարողացա. վոտքս չեր հաս-
նում: Քեռիս գրկեց ինձ և նստեցրեց:

— Պահ, քո տունը շինվի, այնքան թեթեւ ես՝
կարծես փետուր լինես:

— Հը՞, չե՛ս վախենում, հարցրեց նա:

Շատ եյի վախենում, բայց վոր մորթեյին,
չեյի ասի: Ջալալի ցից ականջները, վոր տեսնում
եյի, թվում եր, թե ինձ վրա յե բարկացել:

— Դե՛հ, չընկնես, — ասաց քեռիս ու ձին բաց
թողեց:

2.

Ջալալն սկզբում դանդաղ եր գնում: Թամբը
կոկլիկ եր, վախենում եյի՝ շուռ գամ:

— Հը՞, պի՛նդ ես նստել, — ձայն տվեց քեռիս:

— Հա՛, պինդ եմ նստել:

— Ուրեմն յորդա, — և քեռիս չկկացրեց բե-
րանով:

Ջալալն արագացրեց քայլերն ու սկսեց ինձ
վեր-վեր թոցներ: Յես աշխատում եյի չծռվել:
Քեռիս գոգեց.

— Ապրե՛ս, դռչա՛դ, ապրե՛ս:

Հենց այդ ժամանակ մի գյուղացի մոտեցավ
ու սկսեց խոսել քեռուս հետ: Քեռիս ե՛լ չեր նա-
յում ինձ:

Հանկարծ նկատեցի, վոր թամբը ծռվել ե.
ուզեցի ուղղվել — չեղավ: Ուզեցի բղավել քեռուս —
ամաչեցի: Ջալալը մի գլուխ յորդա յեր վազում,
և յես ավելի ծռվեցի: Աչքս գցեցի քեռուս. նա
տաք-տաք խոսում եր գյուղացու հետ և առանց

ինձ նայելու, ձայն եր տալիս: «Ապրեն, զոչա՛դ, ապրեն»:

— Յես կորա՛, — մտածում եյի, բայց ամոթ ինձ՝ թե ձայն հանելի:

Զայալը մեկ ել ցնցեց և յես ցած ընկա:

Ձին կանգ առավ. քեռիս նկատեց.

— Ա՛յ քեզ բան, Սրամս գլորվել ե ձիուց:

Նա մոտեցավ ինձ ու ծիծաղելով հարցրեց.

— Հը, փո՛նց ե քե՛ֆդ, մեր տղա:

Յես պատասխանեցի, վոր անվնաս եմ:

Ճիշտն ասած՝ լացս գալիս եր, բայց ինձ զրս-պում եյի:

Մեկ ել նստեցի, ու ես անգամ ել չեյի ընկնում:

Այսպես մի յերկու անգամ — և յես շատ շուտով սովորեցի ձի նստել:

51. Գործարանում

Իրար անցան ճախարակներ,
ժիր փոկերն ու պտուտակներ,
շոգեմուրճը հպարտ թնդաց
ու վորոտաց՝ դեռ չեմ հոգնել,
դեռ չեմ հոգնել:

Նրան խմբով ձայնակեցին
չարաճի հաղար մուրճեր.
Ճլրլալով զըրնգացին,
կլկլացին վորպես ուրախ
զեզմանիկներ:

Նշխարանիք պարսի, փառփի
ու եկրտուրջան գործ է:

52. Նրանք բախտավոր են...

Բանվոր Դավիդովին կուսակցությունն ուղարկել եր՝ կոլխոզը դեկավարելու: Նա շտապում եր դաշտ:

— Լծիր, — ասաց նա պապին:

Ու չսպասելով — սկսեց ոգնել նրան:

Որն ամպ եր, քամի. անձրև եր կաթկթում:
Դաշտը գյուղից տաս կիլոմետր հեռու յեր: Այնտեղ եր առաջին բրիգադը, վոր վաբաժ հողը ցաքանում եր:

— Շտապի՛ր, պապի, — խնդրում եր նա:

— Ել վո՛նց շտապեմ. տես՝ ձին քրտինքի մեջ կորել ե:

Բլրի տակով անցնում եյին աշակերտներն իրենց ուսուցչի հետ. նրանց հետևում եյին չորս սայլ՝ ջրի տակառներով:

— Ես ել մեր մանրուքը գնում են մկներին կոտորելու, — մտրակով ցույց տվեց պապը:

Դավիդովը ժպտալով նայում եր: Յերբ մոտեցան, կանգ առավ, նայեց, կանչեց յերեխաներից մեկին, յոթ տարեկան մի տղայի:

— Ինչո՛ւ գամ վոր, — խոսեց տղան, — ծոժրակին իջեցնելով հոր գլխարկը:

— Քանի՞ մուկն ես սպանել:

— Տասնուչորս:

— Դե, նստի՛ր կողքիս — ման ածեմ:

— Դո՛ւ ել նստի՛ր, — ասաց մի փոքրիկ տղվա:

Շարժեցին: Նա դարձավ տղային.

— Վո՛ր խմբումն ես:

— Առաջին:

— Կարող ես—մի անցի՛ր կոլխոզի վարչու-
թյուն... քեզ կպատվեմ, կանգնես կտամ, շոկոլադե
կտամ. կանֆետ սիրո՞ւմ ես:

— Ինչի՞ս ե պետք: Ատամներս ե փչացնում.
ա՛յ, տե՛ս: Նա բաց արեց բերանը, և իսկապես
առջևի յերկու ատամն ընկած ելին:

— Ուրեմն, ընկե՛ր ջան, դու անատամ ծե-
րո՞ւկ ես:

— Եդ դո՛ւ յես անատամ. իմ ատամները
կգան, իսկ քոնը—վո՛չ:

— Փչո՛ւմ ես. իմս ել կգան, փա՛ստ ե...

— Կգան, չե մի... մեծերի ատամները չեն
բսնում:

Ասաց ու ցատկեց սայլակից: Նրան հետևեց
աղջիկը. կարծես ճպուռներ լինեյին—այնպես
ցատկոտում եյին:

Դավիդովը ժպտալով նայում եր. դեռ յերկար
ժամանակ հեռվում կարմրին եր տալիս տղայի
զլխարկը: Նա իր կրծքի տակ ինչ-վոր ջերմու-
թյուն եր գգում, աչքերը թաց եյին: «Է՛մ վ կյանք
կկառուցե՛նք—խոսք չկա. թող վազի հիմա այս
մանչուկը՝ հոր զլխարկը գլխին: Իսկ մի 15—20
տարի անց, ելեկտրական խոփը շուռ ու մուռ
կտա այս հողը: Նա ինձ նման չարքաշ չի լինի—
մորս մահից հետո քրոջս եյի պահում, լվացք
անում, ճաշ յեփում, գործարան վազում: Այո՛,
մեր յերեխաները բաղգավոր կլինեն»—մտածում
եր Դավիդովը, դիտելով կանաչին տվող անծայր
գաշտը...

53. Կարմիրն ու գայլը

Մեկ որ Կարմիրն ու իր քուռակը յետ մնա-
ցին շոկից: Ձիերը տուն գնացին: Արևը սարի
յետևն անցավ, գիշերը վրա հասավ: Կարմիրն ու
քուռակը կամաց-կամաց հեռանալով, անտառ հա-
սան:

Անտառում շրջում եր մի քաղցած գայլ. վա-
ղուց եր՝ վորս չեր ճարել. փորը սովից վեց-վեց
եր անում, ատամները գնգրտում եյին: Հանկարծ
նրա տկանջին քուռակի բարակ խրխինջ հասավ:
Գայլը կանգ առավ, սրեց ականջները, դուռնչը
տնկեց, ողը հոտոտեց ու վազեց դեպի այն կողմը,
վորտեղ Կարմիրն ու իր քուռակն եյին գտնվում:
Ջգուշությամբ—գողեգող մոտենում եր գայլը:
Ելի մի քայլ—և բերանը քուռակի գավակին պիտի
հասներ:


Կարմիրն զգաց վտանգը, խլշտացրեց ականջ-
ները, հոտոտեց ողը և զիլ խրխինջ արձակեց:
Քուռակը լսեց մոր ձայնը, զգաց, վոր վտանգ ե
սպառնում: Կարմիրը կանգնեց, դուռնչն ուղղեց
դեպի քուռակը, յետևը գայլին արեց ու յետևի
վտանների սմբակները պատրաստ պահեց:

Գայլը փորձեց մյուս կողմից մոտենալ քու-
ռակին: Կարմիրը գավակն այն կողմը դարձրեց:
Գայլը յերրորդ կողմից մոտեցավ—այստեղ ել
Կարմրի պատրաստի սմբակներին հանդիպեց:

Գայլի բերանի շուրջը գնում եր, համբերու-
թյունը՝ հատնում:

Քիչ ել վոր անցավ, ուղղակի հարձակման
դիմեց: Կարմիրն ել հենց դրան եր սպասում:

Յեռակի զույգ վոսներով այնպես հասցրեց զայլին, վոր զայլը թռավ յերեք քայլ հեռու: Ընկավ զունչը ջախջախված, իսկ յերեք վոսի յելավ, գլուխն առավ ու կորավ:



Կարմիրն ու իր քուռակը մինչև լույս անտառում մնացին:

Առավոտյան նրանց զտան անտառում, և Կարմիրն ու իր քուռակը վողջ ու անվտանգ տուն դարձան:

54. Բուդյոնին սպիտակների մոտ

Այնպես պատահեց, վոր Բուդյոնին մի գյուղ մտնելիս՝ դեմ առ դեմ հանդիպեց սպիտակներին: Խուսափել անհնար եր. սպիտակները կկրակեյին յետևից—կսպանեյին:

Բուդյոնին մտածեց. — Կորած եմք, յեթե հնարագետ չլինեմք, — ու նա յեց իր հետ ծուղակն ընկած ընկերոջ դեմ քին:

Սպիտակները կարծեցին, վոր իրենցից են, միայն անձանոթ: Ապա մի քիչ շփոթվեցին.

Բուդյոնու ձին նման եր կարմիր-բանակայինների ձիերին: Պոչը խուզած եր:

— Ես ինչ ե, ձիդ նման ե Բուդյոնու զինվորներին...

— Այդ, — ընդհատեց Բուդյոնին. — սա յես խել եմ կարմիրներից:

Սպիտակները հավատացին, առանց մտածելու, վոր հետները խոսում ե ինքը՝ Բուդյոնին:

— Դե՛, նե՛րս յեկեք, ընթրենք, — հրավիրեցին նրանց:

Բուդյոնին ընկերոջ հետ ներս մտավ. ընթրիքի ժամանակ սպիտակները գոփում եյին իրենց գլուխը:

— Բուդյոնուն ճանաչում ենք. ձին ել ե ծանոթ: Վոր հանդիպենք՝ վողջ-վողջ կրռենք:


— Յես ե՛լ եմ ճանաչում, — ասում ե Բուդյոնին, մի անգամ ուզում եյի գերի վերցնել, միայն ձեռքիցս զուրս պրծավ:

Բուդյոնին և ընկերը բազմ զուրս յեկան: Վոչ վոք չկար: Թռան ձիերին ու անհայտացան:

Այս հանդիպումը զուր չանցավ. նա վերցրեց մի վաշտ ու հարձակվեց գյուղի վրա, վորտեղ քիչ առաջ ընթրում եր սպիտակների հետ:

Սպիտակները դիմադրեցին, բայց իզուր, Բուդյոնին բոլորին գերի վերցրեց:





55. Մարտի 8-ը

Մարտի 7-ն երբ Հաջորդ ուրը մամայի տունն երբ Այդ առթիվ Միրիկն ու Միշիկն ուզում էին մի լավ բան նվիրել մամային, բայց այնպես վոր մինչև ստանալն այդ մասին մայրը վոչինչ չիմանար:

— Ի՞նչ նվիրենք, հարցրեց յեղբայրը շշուկով:
— Մի խոսքով շատ լավ բան,— պատասխանեց Միրիկը նույնպես շշուկով:
— Որինակի համար, ի՞նչ:
— Մի լավ-լավ-լավ-լավ...
— Ի՞նչ, ի՞նչ,— ընդհատեց Միշիկն անհամբեր:
— Մի շատ լավ-լավ... ուֆ, Միշիկ ջան, յես ել չգիտեմ, ի՞նչ ասեմ, բայց ուզում եմ, ինչ վոր լինի, շատ լավ լինի, վոր մաման ուրախանա:

Ու նորից սկսեցին մտածել:

— Գտա՛, գտա՛,— բացականչեց Միշիկը:

Մի լավ, լավ Կլարա Յետկինն նվիրենք մամային, սկսեց Միշիկը վողկորված,— անցյալ յերեկո լսում էյի, ինչպես նա կարդում եր Կլարա Յետկինի մասին ու պատմում Համոյի մամային,

վոր Կլարան իրենց մեծն ե ու շատ բան ե արել, վոր կանայք ել ձայն ունենան:

— Սպասիր, Միշիկ ջան,— ընդհատեց քույրը դարմացած,— եղ մի բանը լավ չհասկացա. առաջ վոր կանայք ձայն չունեյին, բա ի՞նչպես էյին խոսում ու յերգում:

— Գիժո՛... քրքջաց յեղբայրը— ախր ես եմ ձայնը չի. սա ուրիշ ձայն ե. սա... սա... գե, ի՛նչպես ասեմ, վոր հասկանաս... Լա՛վ, դրա մասին հետո,— իսկ հիմա գնա քնիր, վոր առավոտը վաղ, նախքան մանկապարտեզ գնալը, մտնենք գրա-խանութ՝ նկար գնելու:

Հաջորդ ուրն արգեն մարտի 8-ն եր, մայրիկի տունը:

Նրանք Կլարա Յետկինի նկարը բերել, խփել էյին մոր անկողնու գլխավերևը, իրենք ել մտել մահճակալի տակ ու սպասում էյին, թե յե՞րբ ե մայրիկը տուն գալու:

— Յեկա՛վ, յեկա՛վ,— բացականչեց Միրիկը լսելով մայրիկի վոտնաձայնը:

Նրա գլուխը կպավ մահճակալի վոտին, ցավից աչքերը մթնեցին և նա ուզում եր լաց լինել, բայց յեղբայրը համբուրում եր ցավոտ տեղն ու համոզում, վոր լաց չլինի:

— Դե լա՛վ, հետո լաց կլինեմ,— համաձայնեց Միրիկը, արցունքները սրբելով:

Մայրը ներս մտավ:

— Ես ի՞նչ ե,— բացականչեց նա դարմացած, տեսնելով Կլարա Յետկինի նկարը:

— Խե իմանաս ո՞վ ե գնել,—բացականչեցին
յերեսաները, պահված տեղից դուրս թռչելով:

Մայրն ուրախացած գրկեց նրանց ու համ-
բուրեց:

— Իմ լավ, իմ խելո՞ք բալիկներ, եղ ի՞նչ
լավ բան եք մտածել—ասաց նա ու նորից—նորից
համբուրեց յերեսաներին:

56. Մոր յերգը

1.

Ննջի՛ր, մանկի՛կ իմ,
ննջի՛ր հանդա՛րտ,
որը հանգի՛ստ ե,
որը խաղա՞լ:

Հայրդ գալու յե
յերկու տարուց,
գնաց՝ յերկրին մեր
պարտքը տալու:

Մեծացիր դո՛ւ ել,
արև իմ նոր,
դարձի՛ր հզո՛ր և
կարմիր զինվոր:

2.

Ննջի՛ր, մանկի՛կ իմ,
որն ե մթնում,
այսոր հանգի՛ստ քեզ՝
վաղը խնդում:

Բայց յերբ լինես դու
քսան տարու՝
կերպի յերկրում քո
ուրիշ գարուն:

Կլինի հինը
վաղուց քանդված.
ննջի՛ր, մանկի՛կ իմ,
ննջի՛ր հանդա՛րտ...

57. Կոմունան

1.

Բացվեց մի որ արյունոտ,
ահեղ լուսաբաց.
հեռվում կրակեցին
զինվորները հարբած...

Մթին զնդաններում
շղթայակալ ընկած,
խիզախ կոմունարներն
սպասում են մահին...

— Կոմունան ընկավ,
կեցցե՛ կոմունան...

Լուսաբացի գոմզը
յերեք անգամ զնդաց.
դահիճներն են կանգնել,
սպասում են անթարթ:

Բերին նրանց մեկ-մեկ
չալլալվեցին նրանք...
ահեղ մահի զիմաց՝
կանչեցին պարզ ու վեհ. —

— Կոմուճան ընկավ,
կեցցե՛ կոմուճան...

2.

Կոմուճան ընկել է,
կեցցե՛ կոմուճան,
ձեր գործը, ընկերներ՝
անմեռ կմնա:

Ահա՛ զրոշը ձեր՝
մեր ուսերի վրա,
հանգիստ դուք ննջեցե՛ք,
մենք գնում ենք առաջ:

Մեզ չի սարսի յերբեք
գազազած թշնամին.
Իր մահերդն է յերգում
զառամ մեր թշնամին:

Ձեր գործը, ընկերներ
անմեռ կմնա,
կոմուճան ընկել է —
կեցցե՛ կոմուճան...

58. Բարեկադի վրա

Բարեկադներում,
կռվողների հետ վորպես կոմուճար,
մի տղա գերվեց տասներկու տարվան:
Պայթեց համազարկն ու տղան տեսավ,
թե ինչպես ընկան իր ընկերները
բարձր պատի տակ:

Ու խնդրեց տղան.
— Թույլ տվե՛ք գնամ՝
կարոտած մորս
տեսնեմ, յետ դառնամ:
— Ծլկե՞լ ես ուզում:
— Ո՛ր, վո՛չ, կապիտան,
կոմուճարները չե՛ն սարսում մահից:
— Իսկ տունն ո՞ւր է ձեր:
— Հեռու չի, այստե՛ղ, շատրվանի մոտ:
Ու գնաց տղան:
«Նաբեց», — ասացին զինվորներն ու սպան
ու քրքջացին բոլորը միասին...

Բայց լռեց ծիծաղն, յերբ տղան հանկարծ
զուճատ ու հպարտ նորից հայտնվեց.
կանգնեց պատի մոտ, համարձակ կանչեց.
— Յես յեկա՛, հիմա կարող եք կրակել...

59. Կոմուճայի որերին

(Կոմուճարի մոր պատմածից)

Յես խեղճ ու տգետ կին եմ. աշխատում եյի
ամուսնուս հետ շարունակ. ծանր եր մեր աշխա-

տանքը, բայց ապրում եյինք քաղցած: Սմուխինս
չդիմացավ, մեռավ. տղաս, վոր անուսում եր մնա-
ցել, փոխարինեց նրան: Յեվ ահա յեկավ մեկ որ
նա, պայծառ ինչպես արեւը և կանչեց. «Մայրիկ,
Փարիզը բանվորների ձեռքն ե, հարուստները
փախան, մենք ե՛լ չենք տանջվելու...»

Նա շատ բան ասաց, յես չեյի հասկանում,
զգում եյի: Զգում եյի, վոր իմ զավակն ուղղում
եր յերջանկացնել թե իրեն և թե մյուսների զա-
վակներին:

Յես ուժ չունեյի, չեյի կարող դիմադրել ու
ասացի. «Յեթե այդպես ե, արժե մեռնել»:

Փարիզը շրջապատեցին. մենք քաղցած եյինք.
յես ասացի. «Թող քաղցած լինենք, թող մեռնենք,
միայն թե մեր զավակները մեզնից լավ ապրեն»:

Մի որ յեկավ նա հրացանը ձեռքին. «Մայրիկ,
թշնամին քաղաքն ե մտնում, յես գնում եմ...
վերջին պայքարին... յեթե յետ չգամ—մի վշտա-
նա»...

Յես համբուրեցի նրան ու ասացի. «Գնա՛,
ընկերներիցդ յետ չմնաս»... Նա գնաց ու այլևս...
չեկավ: Յես տեսա նրա դիակը՝ ծակծրկված գնտակ-
ներով: Վերքերը կրծքից եյին. վոչ մի գնտակ
չեր կպել մեջքին:

Հիշեցե՛ք, վոր փոքրիկ Գուստավը, Լուիզա
Սոտյե-ի զավակը մեռավ դիրքերի վրա, կրծքի
20 վերքերից... կոմունայի համար...



60. Վլ. Իլյիչ Լենին

(Հին բանվորի պատմածը)

1.

Մեկ անգամ, իրիկունը, ընկերոջս հրավերով
գնացի նրա տունը. մոտ 20 մարդ արդեն հավաք-
վել եյին. սրանց մեջ եր նաև մի անծանոթ, շեկիկ
մուրուքով մարդ, վոր ասում եր.

— Դուք աղքատ եք, վորովհետև ձեր աշխա-
տանքից ձեր տերերն են հարստանում: Պետք ե
քշել նրանց, միանա՛լ, ձե՛ղ համար աշխատել:

Մենք ասում ենք նրան.

— Ճիշտ ես ասում, բայց վո՞նց քչենք, չե՞ վոր նրանց կողմն ե ինքը թագավորը...

— Առաջ հենց թագավորից պետք ե սկսել. իսկ սրա համար պետք ե կազմակերպվել, բանվորական կուսակցություն ստեղծել: Յերբ վողջ բանվորները վտաքի կանգնեն, թագավորն ի՞նչ կարող ե անել:

Լսում եմ ու մտածում. «Ճիշտ ե ասում»:

Հետո միայն լսեցի, վոր այս մարդը ինքը Լենինն եր, վորին յես առաջին անգամ տեսա:

2.

Անցել եր մոտ 20 տարի. սկսվել եր մի մեծ, չտեսնված պատերազմ. շատ-շատերին կռիվ ուղարկեցին, բայց քչերը վերադարձան, այն ել առանց վտաքի ու ձեռքի:

Ինձ ել տարան: Ու միշտ մտածում եյինք, թե ինչո՞ւ յենք կռվում. ի՞նչ կլինի սրա վերջը. ահա այդ ժամանակ թռուցիկներ յերեվացին, վորոնց մեջ գրված եր.

«Կորչի պատերազմը, կռիվը հարուստների դեմ պետք ե ուղղել»:

Այսպիսի մտքեր Լենինն եր տարածում. այդ ժամանակ նա արտասահմանումն եր ապրում և այնտեղից մեզ ոգնում եր, լուրեր ուղարկում:

3.

Յերեք տարի կովեցինք, հալ չմնաց. բանվորներն ու զինվորները վտաքի յելան: Արեցին այն, ինչ Լենինն եր ասում. թագավորին քչել եյինք,

բայց մի քիչ սխալվեցինք ժամանակավոր կառավարության հարցում: Նրանից բանվորներին ոգուտ չկար—կապիտալիստների հետ եյին գնում: Սկսվեց մի վեճ—ո՞վ ե ժամանակավոր կառավարության հետ, ո՞վ ե դեմ: Մենք տեսնում եյինք, վոր քանի ամբողջ բանվորությունը մեկ մարդու պես չի կանգնած, բան չի դուրս գա: Յես և շատ բանվորներ մտանք բոլշևիկների կուսակցություն մեջ. գործ շատ կար. ամեն տեղ ասում եյին, «Միացեք կուսակցություն շուրջը, պայքարը նոր ե սկսված»:

4.

Մեկ անգամ լուր տարածվեց, «Լենինը գալիս ե»:

Կայարան գնացինք: Հրապարակը բռնել եյին զինվորներն ու բանվորները:

Մոտեցավ գնացքը, սկսվեց շարժում, աղմուկ: Տեսնենք՝ զրահապատ ավտոյի վրա մեկը բարձրացավ. բոլորը ծափահարեցին:

Լենինն եր, շատ եր փոխվել, բայց ճանաչեցի.

— «Ընկերներ, — ասում եր նա. մի՞ք հավատալ ժամանակավոր կառավարությանը, նա հարուստների կողմն ե: Վերցրեք իշխանությունը. վո՞չ թե գերմանացիների, այլ տերերի, բուրժուայների ու կալվածատերերի դեմ պետք ե կռվել»:

«Վողջ իշխանությունը խորհուրդներին»:

Այսպես ել յեղավ: Մի քանի ամսից ամեն ինչ փոխվեց: Գլեցինք բուրժուայներին, կալվածատերերին: Հոգն ու գործարանները վերցրինք:

Լենինի ասածի պես իշխանությունը խորհուրդներին անցաւ:

Հիմա մեզ մոտ չկա շահագործում, բոլորն աշխատում են ընդհանուրի ոգտի համար, իսկ ծույլերն ու լոգւները տեղ չունեն:

Լենինը ցույց տվեց ուղին, ոգնեց կուսակցութեանը, հավաքեց բանվորութեանը՝ կազմակերպեց: Լենինը միշտ կուսակցութեան ու բանվոր գասակարգի հետն եր, դրա համար ել հաղթեցինք:

61. «Վորդեգիրը»

Թորոսը բարձրահասակ, սպիտակ մորուքով մի ծերունի յեր: Սմբողջ ամառը նա առանց գլխարկի ու վոտաբորիկ եր ման գալիս: Շոգ ժամանակ նա միայն մի կապույտ շապիկ եր հագնում:

— Բարե՛, Թորոս, վճռեղից ես գալիս:

— Վորդեգրիս, ահա այս կարապի յետեից եյի ման գալիս: Գնացել եր կղզու յետեր:

— Վճռեղից ես ճարել այդ կարապը:

— Այստեղ վորսորդներ եյին յեկել, սրա հորն ու մորը սպանեցին, իսկ սա փախել, յեղեգների մեջ եր մտել ու թագ կացել: Բռնեցի. իղուր պիտի կորչեր, բազենները պիտի ուտեյին: Բերի ինձ մոտ, ահա՛ և պահում եմ: Արդեն ընտելացել ե, շուտով մի ամիս կլինի: Առավոտ վաղ դուրս ե գալիս, լող տալիս, կերակրվում և նորից տուն ե գառնում: Գիտե իմ արթնանալու ժամանակը և սպասում ե, վոր կերակրեմ: Մի խոսքով—խելոք թռչուն ե:

Կարապը մոտեցավ խրճիթին և սպասում եր: — Կփախչի քեզանից, պապի՛, յեթե թևերը չկտրես:

— Եհ, յեթե այստեղ նրա համար վատ ե, թող փախչի. բայց ինչո՞ւ պիտի փախչի. կուշտ ե միշտ, շուրջը՝ ջուր: Իսկ թևերը չեմ կտրի. ի՞նչպես կարելի յե խեղանդամ անել խեղճ թռչունին, թող ապրի. և ի՞նչու սպանեցին սրա ծնողներին, չե՞ վոր կարապի միսը չեն ուտում:

Կարապը նայում եր խելոք աչքերով:

— Իսկ շանդ հետ ի՞նչպես ե վարվում:

— Սկզբում վախենում եր Սամուրիկից, հետո սովորեց: Շունը վրան հաջում ե, իսկ ինքը թևով խփում ե. յերբեմն ել միասին զբոսանքի յեն գնում. կարապը ջրի վրա լողում ե, իսկ Սամուրիկն ափին վազում:

Ահա այսպես ենք ապրում յերեքով:

62. Արջի ու կատվի կռիվը

Կաղիկը մի փոքրիկ արջի քոթոթ եր. նա ապրում եր իր մայր Մըթմըթանի հետ անտառում, հյուրանոցին մոտ: Վորսորդութունն այդ անտառում արգելված եր, այնպես վոր զազաններն այնտեղ հանգիստ եյին զգում իրենց: Հյուրանոցի տերը հրամայել եր՝ խոհանոցի ավելցուկները թափել շենքի յետեր գտնվող բացատում, վոր անտառի թավամազ բնակիչներն ուտելու բան ունենան:

Հյուրանոցում ապրում եր մի սիբիրյան կա-

տու իր ձագերով: Յերբ Մրթմրթանը մոտենում
եր խոհանոցին, կատուն իր ընտանիքով նստած
սանդուխքի վերին աստիճանի վրա, տաքանում
եր արևի տակ: Նա աչքերը բացեց ու տեսավ, վոր
իրանից և իր ձագերից յերկու քայլ հեռու կանգ-
նած ե մի բրդոտ հրեշ:

Կատուն ուղեց փախչել, բայց իսկույն հիշեց
իր ձագերին: Մեջքը դուրս ձգեց վորքան կարող
եր, փշաքաղեց, բոլոր ճանկերը դուրս հանեց ու
սկսեց բարձր աղաղակել, կարծես՝ ասում եր.

— Կանգնիր, այլևս վոչ մի քայլ

Արջը կանգ առավ, ապա նստեց յետևի վա-
ների վրա և բարձրացրեց առջևի վոտները: Այս
դրությամբ նա ավելի մեծ յերևաց: Մրթե նա
կվախենար մի փոքրիկ, չնչին գազանից, վորին
կարող ե միանգամից կուլ տար

Մրթմրթանն իջեցրեց իր առջևի թաթերը,
պատրաստվելով հարձակվելու:

Կատուն նորից աղաղակեց:

Ձագերից մեկի թույլ մլափոցն ավելի ևս հու-
ղեց նրան և նա ուղղակի նետվեց արջի գնչի վրա:
Ճասնութ հատ սուր ճանկեր և մի բերան լիք ա-
տամներ խրվեցին արջի մերկ քթի մեջ: Դա նրա
մարմնի ամենազգայուն տեղն եր:


Այս հարվածից հետո կատուն նահանջեց դե-
պի այն կողմը, վորտեղ չեյին կարող հասնել ար-
ջի ճանկերը. նա թռավ, բարձրացավ արջի մեջքը:

Արջը փորձեց պաշտպանվել, ցած գլորել
նրան, բայց բանը վերջացավ նրանով, վոր փա-
խուստի դիմեց:

Կատուն ցատկեց արջի մեջքից այն ըուպեյին,

յերբ Մրթմրթանը՝ սարսափած ու հուսահատված՝
բարձրացավ ծառը:

Կատուն մնաց ներքևում, ուշադրությամբ
հետևելով արջի շարժումներին և հսկելով, չլինի
թե ծառից ցած իջնի:



Կատվի ձագերը բոլորն առաջ յեկան և նստե-
լով մոր շուրջը՝ զմայլվում եյին նրա հաղթու-
թյան տեսարանով:

Հայտնի չե, թե մինչև յերբ պիտի շարունակ-
վեր այդ տարորինակ պաշարումը, յեթե հյուրա-
նոցի խոհարարը տուն չկանչեր կատվին:

63. Եշ և սոխակ

(Առակ)

1.

Իշուկը մեկ սոխակ տեսավ.

— Մեկ ինձ նայիր, — նրան ասավ. —

ասում են դու լավ ես յերգում,

բայց չգիտեմ ճիշտ են ասում:

Յես ականջներ ունիմ լայն-լայն,

լավ եմ լսում ամեն մի ձայն...

Այս լավ յեղավ, վոր քեզ գտա.

դե', մեկ յերգիր, մեկ բլբլա',

տեսնեմ ուղիղ լավ ես յերգում,

թե իզո'ւր են այնքան գովում:

Անմեղ սոխակը նազ չարավ,

սիրուն կտուցը բաց արավ.

ուղեց ցույց տալ մեր իշուկին,

վոր գուր չեն գովում սոխակին:

Ձայնը լարեց և սկսեց...

Սոխակի ձայն... ինչեր չասեց.

մեկ խոսում եր ու մեկ յերգում,

հազար խազով խաղացնում.

մեկ դայլայլում, դրլդրլցնում,

մեկ գեղգեղում, կրկրլցնում,

այնպես շվում, սրնգում եր,

վոր սար ու ձոր զրնգում եր:

Լեռ քարերն ել դարձրին ուշ,

այնքան քաղցր եր, այնքան անուշ:

Տավարներն ել չարածեցին,
այլ նստեցին, ականջ դրին.
տավարածն ել շուռնջը քաշած
սոխակին եր լսում ապշած:

2.

Վերջապես սոխակը լռեց,

իշի վճռին ականջ դրեց.

— Եհ,—եշն ասաց,—վատ չես յերգում,

լավ ես ծվում ու ծվծվում,

բայց յես շատ եմ ամոսոսում քեզ,

վոր չես յերգում աքլարի պես.

յեթե մեր աքլարին տեսնես,

նրա յերգին ականջ դնես,

այնուհետև նրա նման

դու ել կերգես շատ աննման:

Այս վճիռը վոր իմացավ,

մեր սոխակը նոր աչք բացավ.

նա նոր տեսավ, վոր իր դիմաց

մի անճաշակ եշ ե կանգնած:

Թեին խփեց, թռավ, գնաց,

իշի աչքին ե'լ չերևաց:

64. Կովն ու գիլագուավը

Մեր կովը բալն եյին կապել, խոտ եր ուտում:
Մեկ ել հանկարծ մի գիլագուավ յեկավ, մեջքին
նստեց ու սկսեց մեջքը կտցել:

Կովը հանգիստ կանգնել է իր համար, խոտ է ուտում, իսկ գիլագուավը կտցում է, հա կտցում:

Բայց լինելու կովը չի քշում թռչնին, միթե նա չի գգում, փոր իր մեջքը կտցում են, փորում...

Ահա թե ինչու: Այժմ գարունն է. կովերը փոխում են իրենց մազը. գիլագուավն էլ գարնանը բուն է շինում, մազ է պեռք, փոր ձվերի համար տաք տեղ պատրաստի:

Գիլագուավը հանում է կովի հին մազերը. թե կովին է գուր գալիս, թե իրեն ոգուտ տալիս:

Կովի կաշին քոր է գալիս. յեթե տերը ժամանակին չմաքրի, կովը պատերին ու ծառերին է քսվում, փոր հին մազերից աղատվի:

Գիլագուավը թռավ. կտցին մազ կար: Տարավ բունը: Ձվերը տաք տեղում կլինեն. եղ ձվերից, հետո ճուտեր գուրս կգան:

Դանտելուկ
Դեմալ փորսավորին,
Կերալ շնչավորին:

65. Կարմրախայտի փորսը

Հաճախ եր պատահում, փոր կեսորվա շոգին գոմեշները քշում եյինք սարի լանջով ցած, դեպի ձորը, լեռնային գետակի ափը: Մի տեղ գետակն ուժգին թափով ժայռից թափվում էր ցած, խրվ-

վում քարերին ու հազարավոր կաթիլներ ցրում ողի մեջ: Ջրվեժի տակ՝ ջրի առաջ ճմբերով ու քարերով ամրացրել եյինք ու հունը խորացրել:

Ամբողջ որն այդ ջրերում կարմրախայտ եյինք վորսում: Մի որ եր, յերբ գոմեշները տանձուտում վայրի պտուղներ եյին խժոռում, մենք բահը վերցրինք ու իջանք դեպի գետակը: Քարերի տակը ձեռներով «ակը տալով» բարձրանում եյինք վեր: Մեկ-մեկ ձուկն ընկնում էր մատնե-րիս արանքը: Դե, տղա յես—ախանջներից հուպ տուր, փոր չփախչի:



Ջրվեժի տակ, ջրի խորքում մի ահագին ձուկ աչքերը չռած կանգնել էր: Հանեսը կուղեկուղ մոտեցավ ջրին ու բահի սուր ծայրով, ինչքան ուժ ուներ, խփեց, մեկ ել տեսնենք ջուրը կարմրեց և ձուկը կիսված գլխով յերեսն ընկավ: Հանեսը շորերով մտավ ջուրն ու սպանված ձուկն ափ նետեց:

Ձկնով տարվել եյինք ու չգլխեյինք, փոր որն

արդեն մթնել է։ Ձկները շարեցինք դալար ճիւղի վրա ու մութը ծմակով ճամբա ընկանք։

Հասանք տեղ, կրակ արինք ու ձկների փորը թափած, շարեցինք թեժ պեծերի վրա։

Յեւ խժռեցինք խորոված ու համեղ կարմրախայտը։

66. Մայիսյան բզեզը

Այն ինչ է սողում հողի մեջ։ Նա իր ճանապարհն առանց բահի յե փորել և շատ է հոգնել այդ դժվար աշխատանքից։

Հիմա նա մի փոքր հանգստանում է։ Նրա մարմնի վերջին մասը դեռ հողի մեջ է. միայն գլուխն է դուրսը։ Ահա նա բոլորովին դուրս սողաց, ուղղեց իր թևերը, բզզաց և թռավ։

Մենք բոլորս գիտենք այդ փոքրիկ հյուրին։ Մայիսյան բզեզն է այդ։ Ամեն տարի մայիս ամսին է նա մեղ մոտ յերևում։ Սակայն դժբախտություն է, յեթե նա մեծ քանակությամբ է գալիս։ Այդ ժամանակ նա ինչքան վնաս է հասցնում պտղատու ծառերի քնքուշ տերևներին։

Բզեզը խիստ շատակեր է։ Նրա փոսները կեռ ճանկեր ունեն, նրանցով կպչում է տերևներին և մինչև վերջը խժռում է սուր ծնոտներով։

Մեր այգիներում և անտառներում մի քանի շաբաթ շարունակվում է նրա վնասակար աշխատանքը։ Հետո նա հողի մեջ ձվեր է ածում և մեռնում։

Յերեխաները ճանաչում են այդ փոքրիկ շատակերին. յերբ տաք յերեկոներին բզբզոց է լըս-

վում ողի մեջ, նրանք վազում են բզեզի յետևից։

Գիշերը ցրտից թմրում է, առավոտյան տաքանում և սկսում է սողալ։ Բայց շուտով ուղղում է իր թևերը, համարձակ թռչում. դեպի բանջարանոցներն ու այգիները և ուտում, ուտում և ազահությամբ։


Այդ շատակեր միջատին պետք է անխնա վռնչացներ։

67. Արշալույսին

Վաղ արշալույսին, խոտերի վրա,
ցողն իր արծաթե թևերն է փռել,
խսկ վերից աշխույժ արեգակն իր վառ
շերմության, լույսի շողերն է ցրել։

Կոմյերիաները հանդերում ուրախ
և աշխատում են, և աշխույժ յերգում.
խսկ հեռու սարից, քաղցր կարկաչով,
գարնան հորդառատ ջրերն են վազում։

Բանում են, յերգում, դաշտերը հերկում,
մեքենան ուրախ չորս դին է վազում.
այսպես բոլորը՝ ձեռք ձեռքի տված
մի նոր ու պայծառ կյանք են կառուցում։



68. Մայիսի մեկն անցյալում

Նեղ փողոցում հավաքվել եւ ամբոխը—մոտ հարյուր մարդ:

Անհանգիստ են. լավում են ձայներ.

— Մեր արյունն են լամում,—ասում եւ մեկը:

— Ճիշտ եւ, — լավում եւ մյուսների ձայնը:

Առաջ եւ գալիս Անդրեյն ու սկսում.

— Ընկերներ, ասում են՝ աշխարհում շատ ազգեր ու ցեղեր են ապրում—հրեաներ, գերմանացիներ, թաթարներ եւ այլն: Յես չեմ հավատում. կա միայն յերկու ժողովուրդ, յերկու անհաշտ ցեղ—հարուստներ ու աղքատներ: Մարդիկ տարբեր ձևով են հագնվում, տարբեր լեզվով խոսում: Իայց նայեցեք, թե ինչպես եւ վարվում գերմանացի, ֆրանսիացի հարուստը բանվոր ժողովրդի հետ ու կհամոզվեք, փոր նրանք բոլորն ել մեր թշնամիներն են. նրանց բերն կանգնի...

Ամբոխի միջից լավեց հրուռ:

— Նայեցեք մյուս կողմը եւ կտեսնեք, փոր ֆրանսիացի, թուրք, գերմանացի բանվորը—բոլորն ել շան կյանք են վարում:

Լսողների թիվն ավելանում եր, նոր ու նոր մարդիկ եյին գալիս. լուռ եյին, ձգում եյին վրդները, բարձրանում թաթերի վրա ու լսում եյին...

— Վստիկանները, — կանչեց մեկը:

Չորս ձիավոր վստիկաններ ուղղակի վրա տվին, մտրակները թափ տալով ու գոռալով.

— Յրվեցեք...

Մարդիկ դեմքերը խոժոռեցին, ահամա ճանապարհ տալով ձիերին. մի քանիսը բարձրացան պատերին:




— Խոզերին ձի յեն նստեցրել, ու կանչում են... մենք ել ցույց կտանք, փոր կովել դիտենք,— լավեց մեկի հնչուն ու համարձակ ձայնը...

— Սպասեցեք, — շնչում եւ Անդրեյն ու հասկացնում ընկերներին, փոր ցրվեն: Ինքը մնում եւ մենակ, փողոցի մեջտեղում. նրա վրա յեն գալիս գլուխները թափահարելով յերկու հաղթանդամ ձի...

69. Մալխյան յերթ

Մեր հաղթական յերթն եւ ախոր,
աշխույժ, յեռուն փողոցով.
փողկապնեռը՝ կարմիր-բոսոր
դրոշակների—ծփուն ծով:

Գալիս ենք մենք շարան-շարան,
յերգ ու նվագ չորս-բոլոր.
բերում ենք մեզ հետ մարդկության
միշտ յերազած կյանքը նոր:



70. Ինչպե՞ս տոնեցին Մալխի մեկը Գերմանիայում

Մալխի 2-ին անցնում եմ քաղաքի կենտրո-
նով. յերեկոյան ժ. 6¹/₂ եւ Կայարանի առաջ կանգ-

նած են յերեք վոստիկան: Մարդիկ խումբ-
խումբ կանգնած հրապարակում՝ խոսում են հուզ-
ված: Դեմքերն անսովոր են, լարված սպասողա-
կան վիճակում: Այդ դեմքերի վրա կարդում եմ
վերջին 36 ժամվա դեպքերը:

Տրամվայի կայանն եւ Յերեկ ոմբակոծվում
եր այդ կայանը. ախտեղ չորս բանվոր սպանվե-
ցին բոլորի աչքերի առաջ:

Գնում եմ մյուս փողոցը: Մարդիկ խռնվել
են: Դռներից ու պատուհաններից նայում են կա-
նայք ու վախեցած յերեխաները: Մարդիկ սպա-
սում են նոր հարձակումների և պաշտպանում են
իրենց տունը:

Նրանց տունը—պրոլետարական փողոցն եւ Մի
քանի ժամ առաջ ախտեղ տկտկում եյին գնդա-
ցիւրներ և վոստիկանների կատաղած վոճմակը կո-
տորում եր անդեն մարդկանց, կանանց ու յերե-
խաներին:

Ամբոխն ալեկոծվում եւ Վճռական, մռայլ
դեմքեր, հարցական հայացքներ,—մեր բարեկամն
եա, թե՞ թշնամին:

Սպասում են: Ահա, ուր վոր եւ, դուրս կսողա
զրահապատ ավտոն և նորից արճճի հեղեղ կտեղա:

Փողոցներում ամեն տեղ թափված են քարի
ու փայտի կտորներ, յերկաթե ծխնելույզներ:

Կապույտ գլխարկներ ու բլուզներ—պատանի
բանվորների մի խմբակ եւ նրանց հետ՝ յերկու
աղջիկ: Յեկել են իրենց հարդանքն ու համերաշ-
խությունը ցույց տալու Բեռլինի բանվորական
թաղամասին:

Այս ու այն կողմ դեռեա ընկած են պայքարի

դրոշակներն ու ծվեն-ծվեն յեղած պլակատները՝
մարտական լողուններով։

«Դեպի պրոլետարական դիկտատուրա»։

«Պաշտպանենք մեր սոցիալիստական հայրե-
նիքը՝ ԽՍՀՄ»։

Աճում է ամբոխը, աճում է նրա ուժը։

Ինչքան շատ գեմքեր կան և ինչքան տարբեր
են — հոգնած, կատաղած, հուզված, հանգիստ, ծեր,
յերիտասարդ... բայց բոլորն ել մի ընդհանուր
արտահայտություն ունեն։ Այս ամբողջ մասսան
միաձուլվեց, միասնական։

Ցավ ու ատելություն են արտահայտում այդ
գեմքերը։

Յերկու ժամ առաջ անսպասելի համազարկին
զոհ գնացին մի քանի անցորդներ։

Ժամը 7-ին կուտակվում է պատանիների մի
մեծ բազմություն։ Մեկն սկսում է ճառել։ Լսվում
է ուռա։

Հոետորը կոչ է անում ինքնապաշտպանու-
թյան գիմեր։

— Բոլորդ դուրս, դուրս յեկեք փողոց. վաղը
բողոքի գործադուլ է լինելու...

71. Թշնամիները

Կռիվը վերջացավ։ Դաշտում ընկած եյին ըս-
պանվածների կույտեր, մարդկանց և ձիերի գիակ-
ներ։ Այդ կույտերի միջից լսվում եյին վերավոր-
ների հառաչանքները։

Մի չորացած առվի յեզերքին պռկած եյին
յերկու գինվոր, յերկուսն ել ծանր վիրավոր։

Նրանց զգեստները տարբեր եյին։ Մի քանի
ժամ առաջ դեռ կատաղի թշնամիներ եյին։

Այժմ լուռ նայում եյին իրար և ուզում եյին
խոսել։ Բայց իրար լեզու չեյին հասկանում։ Հան-
կարծ ավելի յերիտասարդը սողեցող մոտեցավ
«Թշնամուն» և մեկնեց նրան իր ջրի սրվակը։
Հետո յել աշխատում եր թաշկինակով կտրել նրա
վերքից հոսող արյունը։ Բայց վոչինչ դուրս չե-
կավ, միայն ինքն ավելի թուլացավ, պռկեց,
քուն մտավ։

Վրա հասավ պարզկա գիշերը։ Յուրա քամին
փչում եր հեռավոր լեռներից։

Կես գիշերին տարիքավոր գինվորը կրկին մի
փորձ արավ նստելու, բայց իզուր, արդեն բոլո-
րովին արյունաքամ եր յեզեր։

Աչքը գցեց իր հարևանի վրա։ Յերիտասարդ
գինվորը քնած եր և կուչ եր յեկել գիշերվա
կտրող ցրտից։

— Պիտի սառչի,— անցավ հասակավորի մրտ-
քով. — անպատճառ պիտի սառչի խեղճը. ինչքան ել
յերիտասարդ ե։

Յերը արշալույսի գեմ վիրավորներին հավա-
քող խումբը մոտեցավ նրանց, յերիտասարդը
զարթնեց, ուզեց բարձրանալ ու զարմացավ, վոր
իւր վրա մի վերարկու կար քցած։

Նայեց շուրջը, նայեց հարևանին։ Հարևանը
մեռած եր և պռկած առանց վերարկուի. նրա
վերարկուն եր իւր վրա։

72. Տեքստիլում

Մանում են, մանում են ճերմակ թելերը,
մեր լայն գաշտերի բամբակը մաքուր,
շահել բանվորները, առույգ թևերը
գործում են անվերջ, ուրախ համերգում:

Յեկել ե բամբակը, հասել ե, հոսել,
անցել ձեռքերով բանվոր վաշտերի,
բամբակը ուրախ մի յերգ ե հյուսել,
վոր հետն ե բերել գնդուն գաշտերից:—

— Գնանք գործարան, մալանչներ դառնա՛նք,
թելիկներ լինենք, գործենք վառ կտավ.
մեզ խնամել ե մի հզոր բանակ՝
ազատ աշխարհի արեգակի տակ...

73. Կանաչ քաղաք

1.

Հին քաղաքում, հին տնակում ապրում եյին
Աշիկն ու Ծիտիկը:

Հայրիկն աշխատում եր գործարանում.

Աշիկը գարոց եր հաճախում.


Տատիկը ճաշ եր յեփում.

Ծիտիկն ամբողջ օրն ճչում եր:

— Չանձրացրել ե ինձ ես պրիմուսը,— փլնթ-
փլնթում եր տատիկը:

— Չանձրացրել են ինձ թաց շորերն ու սապ-
նահոտը,— գանգատվում եր մայրիկը:

— Իսկ դուք բոլորդ ել ինձ եք ձանձրացրել,—
ասում ե Աշիկն ու փախում աղանջները, վոր չը-
խանգարեն դաս սովորելու:



2.

Դուռը բացվեց ու ներս մտավ հայրիկը:

— Հավաքեցե՛ք իրերը,— ասաց հայրիկը,—
գնում ենք նոր բնակարան:

— Նոր տուն,— հարցրեց մայրիկը:

— Վի՛շ,— ասում ե հայրիկը,— նոր քաղաք:

— Թիֆլի՛ս,— հարցրեց տատիկը:

— Բագճիլ,— հարցրեց մայրիկը:

— Վո՛շ,— ասում ե հայրիկը,— կանաչ քաղաք:

Անտառում նոր գործարան են կառուցել և նոր
քաղաք են շինում բանվորների համար:

Փոխադրվեցին նոր քաղաք:

3.

Մոտեցան նոր տանը:

Տան վրա գրված ե «Տուն-կոմունա», № 10.

Տնից մի մարդ դուրս յեկավ:

— Յես կոմունայի հերթապահն եմ, գնանք ներս, — ասաց նա:

Ու ներս տարավ նրանց:

Մոտեցան յերեք դռան:

— Ահա ձեր սենյակը, — ասաց հերթապահը հայրիկին.

— Ահա ձերը, — ասաց տատիկին.

— Իսկ այս՝ մայրիկի սենյակն է:

Ներս մտան առաջին սենյակը, վնչ սեղան կար, վնչ աթոռ ու մահճակալ:

— Վնրտեղ կախ տամ վերարկուս, — հարցրեց հայրիկը.

— Սպիտակեղենը վնրտեղ դնեմ, — ասում է մայրիկը.

— Դասերս վորտեղ պատրաստեմ, — հարցրեց Աշիկը:

4.

Հերթապահը մոտեցավ պատին, սեղմեց կոճակը. պատը բացվեց, յերևաց պահարանը:

Մոտեցավ մյուս պատին, քաշեց փականը — պատից դուրս յեկավ մահճակալը:

— Լավ կլինեն մի լողանայինք, — ասաց հայրիկը:

Հերթապահը բաց արեց մի դռնակ. փոքրիկ սենյակ էր, սպիտակ, առաստաղը ծակ-ծակ, ծակոտիներից տաք անձրև էր թափվում:

Լողացան բոլորը: Ծիտիկին մայրիկը լողացրեց:

Քաղցած ենք, մի բան ուտեյինք. այստեղ խոհանոց չկա, — հարցրեց տատիկը:

— Այ այն մեծ տանը, — ասաց հերթապահը:

— Ամանը ձեռքիս վա՞ղ տամ փողոցով...

— Վո՛չ, առանց ամանի գնացեք ճաշարան, նախաճաշեցեք, — ասաց հերթապահը:

Գնացին:

Յերբ վերադարձան, հայրիկն շտապեց գործարան, իսկ Աշիկը՝ դպրոց:

74. Կասկիտալիստական դպրոցում

1.

Մ Ո Պ Ր - ի բյուրոյում յես տեղեկացա, փորցուցարարների շարքում բազմաթիվ պիոներներ ձերբակալվել են: Լրտեսներն ու փոստիկանները շրջում եյին տները, հավաքում նրանց, գցում ավտոներն ու տանում:

Մյուս ուրը յես իմ ուսուցչին մի հայտարարություն տվի, փոր նախորդ որվա ցույցի պատճառով դպրոց չեյի գնացել և ինձ համար շատ թանգ են բանվոր դասակարգի շահերը...

Դասից առաջ ներս մտավ «որիորդ Մերֆին» ու խիստ ձայնով հարցրեց.

— Հարրի Այգմանը յեկե՞լ է այսօր:

— Այստեղ եմ, — կանչեցի յես:

— Ինձ հետևիր...

Նա իմ դիմումը նորից աչքե անցկացրեց և յես նկատեցի դեմքի հուզմունքը. ակնոցները քթից ցած ընկան...

— Ի՞նչ ես ուզում ասել սրանով. «դպրոցի

վարչությունը, լրտեսները և այլն»,—ճշում եր
նա կատարած:

— Այն, ինչ գրել եմ,—պատասխանեցի:

— Մենք քեզ ցույց կտանք—լրտեսներ...:

Վարիչի մոտ եր նաև դատական քննիչը. նա
ժպտալով հարցրեց, չի՞ր վզուշացրել արդյոք վար-
չությունն ինձ, վոր ցույցին չմասնակցեմ: Յես
հաստատեցի այդ:

— Այդ դեպքում ինչո՞ւ թողիր դասերդ:

— Այդ մասին գրել եմ,—ասացի յես հան-
գիստ:

— Ուրեմն պիտներական շահերն ավելի բարձր
ես գնահատում, քան մեր որենքները:

— Անշուշտ. ամենից առաջ յես պաշտպանում
եմ բանվոր դասակարգի և պիտներների շահերը,
ապա՝ իմը, ձերը, դպրոցինը...

— Այդպե՞ս, հը՞մ... կարո՞ղ ես գնալ:

Դասարանում ինձ շրջապատեցին պիտներ-ըն-
կերներս և յերկար վիճում եյինք, «գուշակում»,
թե ինչ պատիժ կարող են տալ ինձ:

2.

Դասերից հետո յես անմիջապես վազեցի կո-
մունիստական կուսակցության կոմիտե, խոսեցի
տեխնիկական քարտուղարի հետ. նա ինձ հանգըս-
տացրեց՝ ասելով.


— Դատարկ բան ե, մի հնգանոց կամ տասն-
նոց տուգանք կվճարես,—պրծավ գնաց:

Մարտի 9-ին յես մասնակցեցի պիտներ-բյու-
րոյի հրավիրած միտինգին, վորտեղ վերջին ան-
գամ յեկույթ ունեցա:

Իսկ հետևյալ օրը յես արդեն ներկայացա
դատարան:

— Հարրի Այզմանն այստե՞ղ ե իր յերոր
հետ,—հայտարարեց քննիչը դատավորին:—Նա
գրել ե այս տոմսը, վորով ապստամբության կոչ
ե անում:

Յեվ իմ գրած հայտարարությունը դատավո-
րին ավեց:



— Ուրեմն դո՞ւք եք այդ Հարրի Այզմանը,—
ասաց դատավորը խոժոռած:

— Այո:

— Այս տոմսը դո՞ւք եք գրել:

— Այո:

— Յեթե ձեզ դուր չեն գալիս ամերիկական
որենքները, գուցե կբաժարարենք ձեզ և կուղար-
կենք՝ ուր հարկն ե: Այնանց դուք քարոզեցեք
ձեր գաղափարներն— ինչքան կուզեք: Իսկ առայժմ
մինչև մարտի 20-ը թող բանտ նստի,—ավելացրեց
նա թթված դեմքով:

Ամբողջ «դատը» 10 բուսեյից ավելի չտեսցի:
Պահալը բռնեց իմ թևից և պտուտավոր սան-
դուխքով դեպի կալանքատուն առաջնորդեց:

75. Աշխարհումս կա մի մեծ յերկիր

Դա ամենամեծ յերկիրն է: Մեկ ծայրից
մյուսը գնալու համար հարկավոր է չորս տարի:
Հարցնենք այդ յերկրի բնակիչներին, բոլո-
րին միաժամանակ—որվա վրիժառու է.

Մեկը կպատասխանի—
մեզ մոտ առավոտ է.

Մյուսը կպատասխանի—
մեզ մոտ կեսօր է.

Յերրորդը կպատասխանի—
մեզ մոտ յերեկոյն է.

Չորրորդը կպատասխանի—
մեզ մոտ գիշեր է:

Հարցնենք այդ յերկրի բնակիչներին միա-
ժամանակ—տարվա վրիժառու յեղանակն է.

Մեկը կպատասխանի—
մեզ մոտ զարոն է.

Մյուսը կպատասխանի—
մեզ մոտ ձմեռ է:

Հարցնենք այդ յերկրի բնակիչներին,—ինչով
էք դուք հարուստ.

Մեկը կպատասխանի. մենք—յերկաթով.

Մյուսը— մենք հացով.

Յերրորդը— մենք քարածխով.

Չորրորդը— մենք բամբակով.

Հինգերորդը— մենք—նավթով:

Յերկաթը գտնվում է սարերի խորքերում.

Հացը—սևահող դաշտերում.

Ածուխը—յերկրի շերտերում.

Բամբակը—ընդարձակ տափաստաններում.

Նավթը—ստորյերկրա լճերում:

Աշխարհումս կան ուրիշ յերկրներ ել—
մի քանիսը—արեմուտքում.

մյուսները արևելքում.

մի քանիսը—հյուսիսում.

մյուսները—հարավում:

Հարցնենք այս յերկրների բնակիչներին. —Ո՞վ
է ձեր հարևանը.

Խորհրդային Միությունը —կա-
տասխանեն նրանք:

—Ի՞նչ բան է Խորհրդային Միությունը:

—Մեր վոխերիմ թշնամին —կասեն վրժառուները.

—Մեր ամենալավ բարեկամը—կասեն մյուս-
ները:

—Ինչո՞ւ յե բարեկամ,—հարցնենք.

—Ինչո՞ւ յե թշնամի,—հարցնենք:

Վորովհետև բոլորիկներն են,—կասեն թե մեկը
և թե մյուսները:

Մի քանիսը կասեն—

—Բոլորիկյան կուսակցությունն ասել է՝
դաշտերն ու գործարանները ձերն են. վրժառուները
կալվածատերերին ու գործարանատերերին:

Մյուսները կասեն—

—Աշխարհիս ամենամեծ յերկրի բանվորներն
ու գյուղացիներն ասացին.—«դաշտերն ու գոր-
ծարանները մերն են». նրանք վրժառուներն մեզ,
նրանք ամեն ինչ խլեցին մեզնից:

Աշխարհիս ամենամեծ յերկրի բանվորներն ու գյուղացիներն ասացին.

— Մենք քրեցինք թշնամիներին: Այժմ ամեն ինչ մեզ ե պատկանում:

— Պիտի կառուցենք մեր յերկիրը,—ասաց կուսակցութիւնը:

— Պիտի կառուցենք մեր յերկիրը,—ասացին բանվորներն ու գյուղացիները:

ՅԵ. Մենք ել սոցիալիզմ ենք կառուցում

«Արևայինը» մանկական սանատորիա յե:

Այստեղ տարիներ շարունակ մեծ համբերութեամբ ու տոկունութեամբ բուժում են այն յերեխաներին, վորոնց վոսկրները վարակված են պալարոխտով:

Այս յերեխաները շարունակ պառկած են. նրանք մեծ խնամք ու հատուկ բժշկութիւն են պահանջում. մանկավարժներն ու բժիշկները վոչինչ չեն խնայում նրանց համար:

Ուստի և նրանք իրենց դժբախտ չեն համարում, այլ մեծ տոկունութեամբ բուժվում են, հավատացած լինելով, վոր կանցնի այդ բուժման շրջանը և նրանք կսովորեն, կաշխատեն...

Ժամանակն անցնում ե, սուրում, ինչպես արագընթաց գնացքը: Ահա և յերկրորդ մայիսն անցավ, անցավ այրող ամառը, հարավի շքեղ աշունը, ու կամաց-կամաց առողջանում ու վեր են կենում Բուբան, Պանյան, Սերյոժան, Լյուլյան...

Թիշկը բարձրացնում ե նրանց, հենափայտեր

ե տալիս. լավ ե, իհարկե, առանց հենափայտերի ման գալ, բայց դե՛ ինչ արած...

Դժվար ե միանգամից քայլել. հասնում են հրապարակ ու... հոգնում, անկողին են մտնում: Դեմքերը կարմրած, այրված. համա լցվել են, հա... — Իսկ և իսկ բուրժույ եք դառել,—ասում ե

Ձոյա Լվովնան ժպտալով:

Վտաները կայնդանան մեկ-յերկու ամսից վոչ շուտ, և յերեխաներն անհամբեր սպասում են այն որվան, յերբ ամբողջ խմբով, առանց մի վայրկյան կորցնելու, հենափայտերին կռթնած ծովափ կիջնեն: Այնտեղ քարտաշներն ու վորմնագիրներն իրենց համար սպիտակ զոյակ են կառուցում, գործարանային յոթնամյա դպրոցի շենքը, վորտեղ ապրելու և սովորելու յեն յերեխաները:

Այս զոյակը դեռ չեն տեսել, բայց գիտեն ամեն ինչ մանրամասն. ամեն ոք նրանց մի նոր լուր են բերում.

— Քանզել են հիմքը... աղյուսները բերել են. յերկրորդ հարկն են սկսել... դրեցին գինամոմեքենան... դադգահներն ստացան...

Յերեկ, վիրաբուժարանում բժիշկը հայտնեց, վոր շատ-շատ հոկանմբերյան տոներին կանցնեն այնտեղ, ու կզակը ցցելով ցուց տվեց դեպի զըզյակը:

Արևայինների («Արևային» սանատորիայում բուժվող յերեխաների) վոգեսորութեան չափ ու սահման չկա. նրանք շտապում են ազատագրվել անկողնուց, իրենց ձեռք բերած ուժն ու յեռանդը գործադրել սովորելու, աշխատելու համար:

77. Գղալ և տրուսիկ

(Ուղբեկստանի պիոնների նամակը)

Մայրս իմ առջև դրեց մի աման փլավ ու ա-
սաց. — կեր:

Փլավն ամենահամեղ կերակուրն է աշխարհում:
Բրինձը — մսի յուզալի կտորներին խառնած...

Յես նայեցի փլավին, բայց չկերա:

— Ել ռւմ ես սպասում, կեր:

— Գղալ ե հարկավոր, — ասացի յես:

Հայրս վեր կացավ տեղից, բռնեց իմ ուսից
ու պինդ թափ տվեց:

— Բա, մատներդ ինչի՞ համար են, — գոռաց
նա: Եդ ձեզ մոտ կոմունիստներն ու պիոններն են
են հնարեր Գղալ, չե մի... կեր ձեռքերով:

— Մենակ հո գղալը չի, ա՛յ մարդ, — վրա բե-
րեց մայրս: — Յերեկ ել վարժուհին կանչել, համո-
զում եր, վոր տրուսիկներ կարենք յերեսաների
համար. ասում եր՝ շոգ յերկիր ե, տրուսիկն ավե-
լի լավ ե, թե ևժան կնստի, թե առողջության
համար լավ ե...


Հայրս ել չսպասեց ու բարկացած գուրս յե-
կավ տնից:

Մայրս ահուդողով սպասում եր, թե վերջն
ի՞նչ ե լինելու:

Յերեկոյան հայրս ուշ յեկավ. յես պառկել
եյի, բայց ահից չեյի քնում:

— Առ, Հասան, — ասաց նա ու յերկարացրեց
մի նախշուն գդալ: Փլավը գդալով կեր, ուտելուց
հետո յեկ կարող ես բերանդ ու շրթունքներդ

մաքրել, բայց տրուսիկ չես տեսնի: Թող Արամի
նազնեն, իսկ մեզ, ուղբեկներուս — մեզք ու ամոթ ե:



Յես վերցրի գդալն ու մտածում եյի. «Ամեն
նոր բան խորթ ե ու դժվար. վոչինչ, մի որ ել
տրուսիկը կնվաճենք»...

78. Արութի պայմանը

1.

Հնձի թունդ ժամանակն եր:

Վողջ գյուղը հանդն եր թափվել: Տղամարդիկ
հնձում եյին, կապում. կանայք խուրձերն եյին
կրում, իսկ յերեսաները թափված հասկերն եյին
հավաքում: Մենք ել եյինք տնով-տեղով հունձ
անում: Ինձ ու մեր Արութին ել եյին տարել,
վոր համ հասկ հավաքենք, համ ել հնձվորները
համար աղբյուրից սառը ջուր բերենք:

Արուսթն ինձնից մի տարով մեծ եր. նրա խոսքն ինձ համար որեւէ եր:

Արուսթի «քիթը կախ եր», փնթփնթում եր. շուտ-շուտ, ծարավությունը պատճառ արած, գնում եր ծառի տակ նստում:

Մեր արտից քիչ հեռու, դիմացի հովտում, յերկար ու մեկ ձգված եյին կոլեկտիվի արտերը. մոտ քսան-յեռեսուն հնձվոր միատեղ հնձում եյին, յերգում... մինչև մեր ջուր բերելը, մինչև յետ գնալը, կրակի նման լափում եյին լեն ու բոլ դաշտը, իսկ մեր արտը կարծես տեղից չեր շարժվում:

— Հազար անգամ ասեցին՝ կոլեկտիվ մտի, ահանջ չգրեց. հիմի ես լափ ա,— թոնթորում եր իրեն-իրեն Արուսթը:

Արուսթը շատ ե բարկացած, մեղադրում ե հայրիկին, պապին ու գոգում կոլխոզը: Տրեխները հանել, փոսները դրել ե սառը, գլգլան ջրի մեջ ու չի շտապում: Ուզում եմ շտապեցնել, բայց վախենում եմ:

— Զհաննամ թե կուշանանք, թող կոլեկտիվի նման բոցկա շինեն, ջուր կրեն:

Մեկ ել դարձավ ինձ թե,— Վանի... արի փախ-չենք կոլեկտիվի սարը:

Յես ասի, փոր մերոնք կբարկանան, բայց նա վեր կացավ ու ճամբա ընկավ—ասելով.

— Լավ, կ'աց, թող գելերն ու արջերը քեզ ուտեն:

Յես վախեցա:

Վազում եմ Արուսթի յետևից, ել թուփ ու մա-ցառ չեմ հարցնում:

Հասել ենք գետին. վարար ե, անցնել չենք կարող: Արուսթը տրեխները հանեց, շալվարը յետ ծալեց, մտավ ջուրը: Խորն ե. գետի հոսանքով ցած իջանք: Գտանք մի քիչ նոսր, լայն տեղ: Արուսթն ինձ շալակեց ու մտավ ջուրը: Վոսները ծռռատելով գնաց, գնաց ու մեկ ել թրըմբ... ջրի մեջ տեղը: Արուսթի փափախը գետը տարավ: Արուսթն ինձ ջրի մեջ թողեց ու վազեց փափախի յետևից: Մի կերպ դուրս յեկա ջրից ու գետի ա-փով յես ել եմ վազում թրջված, տմզկած...

Արուսթը վազում եր ավիով, քար ու փետ ջը-պըրտելով... Անողնու. փափախն աչքերիցս կո-րավ:

Գետափին կանգնել ենք ու հուսահատ իրար ենք նայում: Թաց շորերը կպել են մեր մարմինն ու չլըփ-չլըփում են: Զգրտեյինք՝ թե վնասեղ ենք: Արուսթը վազվզում ե գես ու գեն, թե մի ճամբա գտնի: Խելքը բան չի կտրում: Արևն ել թեքվել ե, ուր փոր ե՝ սարի քամակը կանցնի...

Հենց ես միջոցին, փորտեղից փորտեղ մի ձիա-փոր կանգնեց մեր գլխավերևը:

Ադա, ի՞նչ եք շինում ես տեղ,— հարցրեց:

Խոսողը թուրք եր, բայց հայերեն եր խոսում:

Արուսթին ճանաչեց, մոռեցավ, ձիուց իջավ, ինձ ու Արուսթին ձիու վրա դրեց ու ինքն առաջ-ներս ընկավ:

Տեղ հասնելուն պես մեզ իսկույն մերկացրին, վրաներս վերմակ գցեցին, շորերս լվացին, չո-րացրին. թեյ տվին, կերակրեցին:

«Մեր գյուղն անցել է յինք ու գետի ափով հասել մեր հարեան թուրք գյուղին», - մտածում է յի յես Լույսը բացվեց. Սուլեյման քեռին առաջարկեց, փոր ձի նստենք ու գնանք մեր տուն:

Արուսթը թե, «յես տուն չեմ գնալ».- Թող Վանին գնա մեր տուն ու ասի, փոր մինչև մերոնք կոխող չմտնեն, յես ել մեր տուն չեմ գնար. Սուլեյման քեռին գրկեց Արուսթին, համբուրեց ու խոստացավ հետներս գալ, փոր Արուսթի հայրիկին համոզի՝ կոխող մտնել:

Զիեըը թամբեցինք ու ճանապարհ ընկանք...

79. Սունկի ծնունդը

Գիշեր է խոր:

Մենակ կլոր

լաւնյակը դեռ չի քնած.

գնում է նա, նայում է ցած,-

ցածում ահա՛ մութ ծմակ,

մութ ծմակում, կոճղի տակ,

չոր տերևն է ժաժ գալիս -

սունկն աշխարհք է դուրս գալիս:

* *


Որը փայ է, չյուներ հալկայ արևից,
չիլալով զուր է հուսում դռներից.

ասար ու չորեր վարդաբլայի

կանաչով,

դաշրը ծածկվեց վոյխարների

հոսերով:



80. Մետաքսե թաշկինակը

Մի աղջիկ խնդրեց հորը, փոր իրեն մետաքսե թաշկինակ նվիրի:

Հայրը պատասխանեց.

Յերբ դու կիմանաս թե ինչպես է ստացվում մետաքսե թաշկինակը, յես կկատարեմ քո ցանկությունը:

— Ինչպես իմանամ, - հարցրեց աղջիկը.

— Գնա մեր հարեան շերամապահի մոտ, հարց ու փորձ արա, հետեիր - ու ամեն ինչ կիմանաս. Աղջիկը գնաց շերամապահի մոտ ու հարցրեց. Վերադառնալից եք մետաքս ստանում. ցույց

տվեք:

Շերամապահը նրան մի մաքուր սենյակ տա-

րավ, փորտեղ դարակներ զբա, թթի տերևներ ի մեջ փռել եյին թրթուրները:

— Այ, եվ ե մետաքս տալիս,—ասաց նա:

— Յերևի թթի տերևներից են մետաքս շինում,—մտածեց աղջիկը և ուշադիր նայում եր, թե ինչպես թրթուրներն ազահուլթյամբ ուտում են թթի տերևները:

— Ահ, նրանք կերան ամբողջ մետաքսը,—հառաչեց աղջիկը:

Շերամապահը ժպտաց ու շոյելով աղջկան՝ ասաց.—նրանք փոչ թե ուտում են մետաքսը, այլ հենց իրենք են մետաքս պատրաստում:

Ու աղջիկն սկսեց ամեն ուր այցելել շերամներին:

Նա տեսավ՝ ինչպես թրթուրները թելեր արձակեցին, իրենց շուրջը բներ հյուսեցին ու հարսնյակ (բոժոժ) դարձան:

Աղջիկը շարունակ մտածում եր մետաքսի մասին: Այն ժամանակ շերամապահը ցույց տվեց նրան մի անկյունում առանձնացրած բոժոժներ, փորոնք մուկ գույն եյին ստացել, իսկ բոժոժների մի ծայրը թրջվել եր: Նրանց միջից գուրս յեկան սպիտակ թիթեռներ, փորոնց թևերը դեռ թաց եյին:

Կարճ ժամանակ թռչկոտելուց հետո այդ թիթեռները ձվեր անեցին—մանր, խաշխաշի հասիկների նման—ու իրենք մեռան:

— Շերամի սերմն ե այս,—ասաց շերամապահը.—զարնանը սրանցից թրթուրներ գուրս կգան, ապա հարսնյակներ կդառնան, հետո... դե, գնա ասա, հետո ի՞նչ կլինի:

— Հետո թիթեռ կդառնան, թիթեռը ձու կածի և, և... կմկմաց աղջիկն ու դարձյալ հիշեց:

— Իսկ մետաքսը, ուր մնաց մետաքսը:

— Մետաքսը,—շարունակեց շերամապահը,—մետաքս ստանալու համար բոժոժների մեծ մասը լցնում ենք զուլ ջրի մեջ. թելերը փափկանում են ու արձակվում: Ահա այդ թելերի համար սպանեցինք հարսնյակներին՝ քսած թրթուրներին:

— Յեթե չսպանեյիք, նրանք թիթեռ կդառնային և լույս աշխարհ կգային՝ կրծելով մետաքսի թելերը,—վրա բերեց աղջիկը:

— Ճիշտ ե,—ասաց շերամապահն ու բոժոժներ տվեց աղջկան:

— Յես հիմա գիտեմ բոլորը—ձայն տվեց աղջիկը և վազեց տուն՝ այդ բոլորը հորը պատմելու:

Ժամկետով

Ու՛մ փռահե ե շիրա՛ծ,
անա՛խ, անդա՛նակ:

81. Գիշերն անտառում

1.

Մի անգամ ընկերներս ինձ անտառ տարան, փոր գիշերը մնանք և առավոտը մոռ քաղեցք:

Առաջին անգամն եր, փոր պիտի գիշերեյի անտառում: Յես սիրում եմ անտառի զովը, նրա խշշոցը, նրա փոթորիկն ու լուռթյունը:

Յերբ տեղ հասանք, մուտն ընկավ. ընթրեցինք. Վանին ասաց.

— Հիմի մեռելի պես կընենք. բեղարած ենք: Ընկերներս, ճիշտ ե, քնեցին, բայց յես չկարողացա քնել. պառկած ականջ եյի գնում անտառի ձայներին:


Յերբ անտառը լուռ եր, տարորինակ ձայներ եյին լսվում. մի տեղ քնած թռչունի մեկը հանկարծ ճչում եր, թևերը թափահարում ու հանկարծ ելի լուռ, մի ուրիշ կողմ լսվում եր մի բարակ բառաչ, և ապա անտառի թափված ցախերը խըշխշում եյին ինչ-վոր մեկի փոսների տակ: Ինձ թվում եր, վոր մեկը վազում ե անտառով...

Յես վախից Վանուն դարձեցրի.

— Վանի, են հիւ ա վազում...

Նա քնաթաթախ ականջ դրեց ու

— Պախրա կըլի,—ասավ:



Հագիվ այդ ձայնը լուել եր, հանկարծ յերեխայի լացի ձայն լսվեց—հւյ, հւյ, հւյ... Ո՞վ ե գցել այդ յերեխային... Մինչ մտածում եյի լացը նորից կրկնվեց... ու հանկարծ լացից հետո մի բարձր քրքիշ հա-հա...

Սարսափ անցավ մարմնովս, վախից հրեցի Վանուն:

Լացն ու ծիծաղը կրկնվեց.—են հիւ ա, Վանի: Յերեխա՞ յա:

— Չէ, ասավ Վանին,—քոռ բու յա...

2.

Յես աչքերս կրկին փակեցի, վոր բան չտեսնեմ: Իմ բախտից լույսը բացվում եր. յերբ աչքերս նորից բացի, ուղիղ իմ դիմաց նկատեցի մի զույգ պսպղան աչքեր: Ինձ թվաց, վոր բերանը բաց, լեզուն կախ քցած մի մոխրագույն շուն ե...

Սրտապնդվեցի, նստեցի ու կանչեցի.

— Քուչի, քուչի, քուչի...

Շունն ականջները ցցած, աչքերը փայլեցնելով շարունակում եր նայել:

— Արի, արի,—կանչեցի բարձր:

Իմ ձայնից Վանին դարձեց:

— Եդ հիւ ես կանչում,—հարցրեց.

Ապա նայեց ու հանկարծ գոռաց.

— Տղերք, գելը, վեր կացեք...

Տղաները մի ականթարթում վեր թռան, քար ու փայտ վերցրին ու ընկան գայլի յետևից:

Յես մնացի մենակ ու ամոթահար:

Ուրեմն շատ հեռացան...

Ուրեմն ինձ ել չեն գտնի...

— Եհէյ, Վանի, եհէյ, հէյ...

Տեսնելով ձայն չկա—լաց յեղա:

Այդ ժամանակ հանկարծ ընկերներս ծիծաղելով դուրս յեկան ծառերի յետևից.

— Ամոթ չի, տի, լաց ես ըլնում...

Յես թևով աչքերս սրբեցի և ինքս եր ուրա-
խությունից, նրանց հետ ծիծաղեցի իմ վախի վրա:

Արդեն լուսացել եր, ամանները վերցրած
գնացինք մոռուտ...

Այդ օրվանից շատ տարիներ են անցել, բայց
յես յերբեք չեմ մոռանում այդ գիշերը, փորձհե-
տեմ այդ մի գիշերվա մեջ շատ բան սովորեցի...

Յես իմացա, փոր բուն յերեխայի նման լաց
ե լինում, փոր գայլը նման ե շանը, բայց այն-
քան ել յերկյուղալի չի, յեթե ընկերովի հարձակ-
վեն նրա վրա...

82. Փոթորիկ

Կեսօրին ողբ դարձավ խեղդող և ծանր: Քիչ
հետո արևն ամպի տակ թաղնվեց: Արևմուտքից
գլուխ բարձրացրեց մի սև ամպ և շտապով առաջ
շարժվեց:

Ամեն ինչ տխրեց բնության մեջ: Կովերը



գլուխները կախեցին, ձիերը ուռնգներն ուռցրին,
փնչացրին և բաշերը թափ տվին: Եռտուր լսվեց
մի դանդաղ, հեռավոր փորոտ: Ամեն ինչ լռեց, կար-
ծես սպասում եյին ինչ փոր բանի: Ո՛ւր գնացին
թռչունները, փոր այնպես թռչկոտում եյին և ու-
րախ ցերգում: Ի՞նչ յեղան բզեզները, փոր շարու-
նակ բզզում եյին խոտերի մեջ: Բոլորը թաղնվել
և լռել են: Ծառերը դադարել են որորվելուց և
կանգնած են ուղիղ: Մարդիկ շտապում են քաշվել
իրենց տները:

Տիրեց ընդհանուր լռություն:

Հանկարծ անտառի կողմից անցավ մի թեթև
քամի: Իր սուր շնչով գիպավ մարդկանց յերեսին,
աղմկեց տերևների մեջ, շրթնոցով ծածկեց դուռը,
փռլին հավաքեց, պտտեց փողոցում և լռեց:

Սուրաց մի ուրիշ քամի, մտավ փողոցները,
տապալեց մի քանի փտած տախտակ, ցած գցեց
մի քանի կղմինգը և հավերին քջեց պտտերի տակ:

Անցավ: Նորից լռություն տիրեց: Ընկան անձ-
րեի խոշոր կաթիլներ, և հանկարծ կայծակը փայ-
լատակեց: Ամպը փորոտաց: Վախեցած ձին կապը
կտրեց և թռկը վզին դաշտ վազեց:

Անձրևն սկսվեց և քանի գնաց հորդացավ,
սաստկացավ:

83. Ծնածուկը

Մեր նավը խարխիս եր գցել Աֆրիկայի տփի
մոտ:

Որն սքանչելի յեր, ծովից փչում եր զով քա-
մին, բայց յերեկոյան դեմ յեղանալը փոխվեց:

տութ եր, մեզ վրա յեր փշուժ անապատի տաք ողը՝
Արեւի մայր մտնելուց առաջ նավապետը հրա-
մայեց՝ «լողանալ»:

Նավաստիներն իջան ծովը. նրանց հետ ջուրը
թռան յերկու յերեխա, փորոնք մողեսների պես
ձիգ տվին իրենց մարմինը և փորքան ուժ ունե-
յին, սկսեցին մրցել:

Յերեխաներից մեկի հայրը, մի ծեր թնդանո-
թաձիգ, հիանում եր իր յերեխայով. յերը տղան
սկսեց յետ մնալ, հայրը ձայն տվեց.

— Յետ մի մնալ, քեզ տեսնեմ, ուժերդ լա-
րի:

Հանկարծ նավի վրայից մեկը սարսափած
կանչեց. «Շնաձուկը»,— և մենք բոլորս ջրի մեջ
տեսանք ծովային հրեշի մեջքը:

Շնաձուկը լողում եր դեպի յերեխաները:
Թնդանոթաձիգը, քաթանի պես գունատ, ա-
ռանց տեղից շարժվելու նայում եր մանուկներին:


Նավաստիներն իջեցրին նավակը, թռան մեջը
և փորքան ուժ ունեյին, թիավարեցին դեպի մա-
նուկները, սակայն նրանք դեռ շատ հեռու եյին,
իսկ շնաձուկն ավելի ու ավելի յեր մոտենում:

Հանկարծ յերեխաներից մեկը յետ նայեց և
բոլորս խլացնող մի ճիչ լսեցինք. այդ ճիչը կար-
ծես արթնացրեց թնդանոթաձիգին: Նա տեղից
պոկվեց, վաղեց թնդանոթի մոտ ու շուռ տվեց
փողը դեպի յերեխաները...

Նավի վրա յեղածներս վախից քարացած սպա-
սում եյինք, թե ինչ ե լինելու:

Թնդանոթը կրակվեց ու մենք տեսանք, ինչ-
պես ծերունին ընկավ թնդանոթի կողքին և դեմքը

ծածկեց ձեռքերով: Ի՞նչ յեղան շնաձուկն ու յե-
րեխաները—մենք չեյինք տեսնում՝ ծուխը պա-
տել եր նրանց:



Յերը ծուխը քաշվեց ջրի վրայից, ամեն կող-
մից լսվեցին հանդարտ, ապա ուժեղ տրտունջ և
վերջապես բարձրաձայն, ուրախ ձայներ:

Ծեր թնդանոթաձիգը բաց արեց դեմքը, կանգ-
նեց և ծովին նայեց:

Ալիքների վրա տարուբերվում եր անշնչա-
ցած հրեշի դեղնավուն փորը:

Մի քանի րոպեյում նավակը հասավ յերեխա-
ներին ու նրանց նավ վերադարձրեց:

Ժամերակ

Կերբու, Կերբու—Խամբու Վա,
Խամբու Կերբու—Փողի Վա:

Սուրաժ
Գործը մեկ ե—գործողն հաշար:

Ասարիկ շոգ է, ցորեն-գարի
 հասել էն,
 խոտը փաղել արեւի քամի
 դիպել էն.
 Ծառերը վողգ ծածկվել են փերկով,
 պրուդները «ծիր» են անում
 ծալքալով:
 Ո՛յ, ո՛յ, ո՛յ, — ամառ է,
 արևը խիստ կվառէ:

84. Թեւավորը

Մեկ անգամ Թեւավորին և ուրիշ յերկու ա-
 ղափսիների տեղավորեցին մի մեծ նավի վրա: Վո-
 ռոշվեց, վոր նրանց ազատ պիտի թողնե՞յին, յերբ
 ամին աչքից չքանար:

Տաս ժամվա ճանապարհորդությունից հետո
 նավի վրա մի սարսափելի դժբախտություն տե-
 ղի ունեցավ՝ շոգեմեքենան փչացավ: Թանձր մա-
 ռախուղի մեջ նավը տատանվում էր մի թեթև
 տաշեղի նման: Նա միայն սուլում էր զուր տեղը
 և ոգնություն խնդրում:

Այս խորտակվող նավի վրա մեկը հանկարծ
 հիշեց պոստային աղափսիներին: Նրանցից ընտրե-

ցին մեկին, աղափսու պոչի ներսի կողմից կապե-
 ցին մի անթըղելի կտորի մեջ կապված հեռագիր:
 Յերբ ամեն ինչ պատրաստ էր, թռչունին բաց
 թողին, և նա մի վարկյանում կորավ մառախուղի
 մեջ:

Կես ժամից հետո թողին յերկրորդ աղափսուն:
 Սա թռավ, բայց մի քանի վարկյանից հետո վե-
 րադարձավ ու նստեց նավի կայմի վրա: Նա վա-
 խեցել էր, և վոչ մի բան այլևս չէր կարող նրան
 ստիպել, վոր նորից թռչի ալեկոծվող ծովի վրա-
 յով:

Ապա տախտակամածի վրա դուրս բերին յեր-
 րորդ աղափսուն, — «Թեւավորին»: Թեւավորի սիրտը
 մյուս յերկուսից ավելի համարձակ էր բաբա-
 խում:

Թեւավորի պոչի տակ կապած հեռագրի բովան-
 դակությունն այս էր.

«Առավոտյան ժամը 12-ին, հինգշաբթի: Ափից
 200 կիլոմետր հեռավորության վրա մեր նավի
 մեքենան կոտրվեց: Մառախուղի մեջ միանգա-
 մայն անճար ենք մնացել: Վորքան հնարավոր է՝
 շուտ ոգնության հասե՛ք: Նավապետ»։

Թուղթը, վորի վրա գրեցին նավային ընկե-
 րության հասցեն, գլանաձև փաթաթեցին, ան-
 թըրջելի պատյանի մեջ դրին և կապեցին Թեւ-
 վորի պոչի մեջտեղը: Ապա նրան ազատ թողին:

Իրեն ոգի մեջ զգալով՝ Թեւավորը նավի վրա
 մի շրջան գծեց, ապա յերկրորդը ավելի բարձր և
 այդպիսի շրջաններով սավառնեց վեր ու վեր,
 մինչև վոր բոլորովին կորավ ամպերի մեջ:

Առաջնորդվելով հոտառությամբ՝ Թեւավորը

միշտ մի ուղղութիւն եր բռնել, և արդեն նավից բաց թողնելուց մի րոպե հետո, նա ուղիղ դեպի աղափնետուն եր թռչում:

Այդ որը աղափնետան տերն զբաղված եր, յերբ լսվեց արագ թափահարող թևերի ձայնը: Նա յետ դարձավ ու տեսավ, թե ինչպես մի կապույտ աղափնի նետի պես լուսամուտից ներս թռավ և իսկույն ջրի վրա վազեց: Տերը նայեց մի վայրկյան, թե ինչպես աղափնին արագութեամբ շուր ե խմում, և հանկարծ բացականչեց.

— Սա չէ՞ վոր իմ սիրունիկ թևավորն ե:

Իր սովորութեան համաձայն գրպանից հանեց ժամացույցը և տեսավ՝ ցերեկվա, 2 ժամ 30 րոպեն ե: Հետո նորից թևավորին նայելով՝ նկատեց նրա պոչին կապած ժապավենը: Արագ փակեց դուռն ու լուսամուտները և թևավորին բռնեց՝ մի րոպեյից հետո հեռագիրը նրա ձեռքին եր:

Հասցեն կարդալով՝ նա իսկույն վազեց դեպի նավային ընկերութիւն: Այստեղ իմացավ, վոր մոտ 200 կիլոմետրը թևավորը թռել ե 2 ժամ 40 րոպեյում ովկիանոսի թանձր մառախուղի միջով: Մի ժամից հետո խորտակվող նավին անհրաժեշտ ոգնութիւն ուղարկվեց:

Սովորութեան համաձայն այս ընկերութեան քարտուղարն իր սեփական ձեռքով, անջնջելի թանաքով թևավորի աջ թևի փետուրի վրա գրեց նրա քաջագործութեան մանրամասն դեպքը:

Նավից ուղարկված յերկրորդ աղափնին անհետ կորավ: Յերևի նա գոհ գնաց կատաղի ովկիանոսին:

85. Ընկերներ

Վիտյան լավ տղա յեր—ամեն բանով. խելքով, բարի սրտով, գեղեցկութեամբ. ինչ խաղեր եյինք խաղում, ինչ ուրախ կյանք եյինք վարում... Մեկ ել կկանչեր ինձ.—Յեֆիմկա, գնանք վորսի: Մի հրացան ուներ—հայրն եր նվիրել: Վերցնում եյինք ու չափչփում անտառները յերկու-յերեք որով: Գալիս եյինք տուն. նրան—նախաինք, ինձ—եթակ: Մեկ ել տեսար մյուս որը դարձյալ—Յեֆիմկա, սունկի գնանք: Թռչուններ գարկած կլինենք հազարով. սունկ ժողված կլինենք անհաշիվ: Պատահում եր թիթեւներ, բզեզներ եր բռնում ու արկղի մեջ գնդասեղների վրա շարում: Հետաքրքիր եր, շատ հետաքրքիր...

Կարգալ եր սովորեցնում ինձ... —Յեֆիմկա, —ասում ե, —կարգալ պիտի սովորեցնեմ քեզ: Ու սկսում եր.—Սա տեսնեմ—Ս. Յես դռում եմ ւն, ւն... Մի ծիծաղ, ուրախութիւն:

Սկզբում սա մի հանաք եր, բայց նա այնպես կպավ այդ բանին չեր թողնում, վոր շունչ քաշեմ: Հոգիս հանում եր: Ազաչում եյի, պաղատում: —Վիտյա, —ասում եյի,—գիրն իմ ուժից վեր ե, ասում եմ չեմ կարող, ելի՛... բայց նա ինձ վրա այնպես եր գոռում: Հայրիկի մտրակով կղաղեմ—սովորիր: Լա՛վ, Լա՛վ, սովորեմ: Սովորում եմ... Մի անգամ դասից փախա... Յեվ նա ամբողջ որը վորոնել եր ինձ: Հետո ասում եր.—Յեթե այն որը քեզ պատահեյի,—կսպանեյի:

Այ թե ինչպիսի տղա յեր: Կրակ եր, կրակ: Ինձ շատ եր սիրում... հոգին չեր խնայում...

Դասերու

Դե վոր խոսես — կիտաի,
յեսե քողես — կփնի,
մարդու ջեռփով ե ղիւսում,
սակայի անմահ ե դառնում:

86. Հինգ յեղբայրիկներ

Յես ձեզ կպատմեմ հինգ յեղբայրիկների մասին, վորոնք ծնվել են յերկրագնդի զանազան մասերում և բոլորովին իրար նման չեն:

Առաջին յեղբայրիկը դեղին եր, աչքերը սև ու նեղ, մազերը սև ու կոշտ. նա յերբ նայում եր իր չինացի հորը, կարծում եր, վոր բոլոր մարդիկ նրա նման են. ասենք՝ նա վոչինչ ել չեր մտածում, այլ պառկած լսում եր մորը, վոր յերգում եր.

Ձիւ սի սուռն չինգ սին. սսոուն սեն...

Մյուս յեղբայրը շագանակագույն եր, աչքերն ու մազերը — սև. նա սիրում եր ժպտալ հոր շագանակագույն դեմքին ու գլխի մեծ փաթեթին. մոր աչքերն ել եյին սև, իսկ մազերը՝ յերկար-յերկար, սև-սև. պառկած մոր ձեռներին, լսում եր նրա յերգը.

Մարաբուսա կունեկումուգա դեմկրեկարսո սեպր...

Այս փոքրիկն ապրում եր Հնդկաստանում,

աշխարհի այն մասում (Ասիա), ուր ապրում եր չինացին և սպիտակամորթ տերերից կրում եր այն զրկանքները՝ ինչ վոր իր յերկրում կրում եր չինացի յեղբայրիկը:

Յերրորդ յեղբայրը սև եր ամբողջովին. սև եր մարմինը, աչքերը, սև եյին գանգուրները. մայրն եր, հայրն ել սև եյին, բայց փոքրիկը չեր զարմանում. կարծում եր այդպես ել պետք ե լինի: Նա սիրում եր, յերբ մայրիկը զրկում եր իրեն ու յերգում.

Ոսյուլա, մանգվանա, Ոսյուլա:

Այս յեղբայրիկն Աֆրիկայում եր ապրում, նա մի փոքրիկ խափշիկ յերեսա յեր:

Չորրորդը՝ կարմիր եր. բոլորովին կարմիր, բայց աչքերը սև եյին, մազերը սև ու կոշտ. նա պինդ պարուրած՝ պառկած եր մոր ուսին, կողովում: Մայրը յերբ ագատ եր լինում, հանում եր նրան գամբուղից, համբուրում եր ու յերգում.

Չիդա-ի

Նակագու-կալու

Բիբե.

Այս յեղբայրիկն ապրում եր հեռու Ամերիկայի խոր անտառներում, նա մի փոքրիկ հնդիկ եր:


ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀՈԿՏԵՄԲԵՐԻԿՆԵՐԸ

Ահա և հինգերորդ յեղբայրիկը, ինչքան շատ են նրանք. դեմքերը, մարմինը՝ սպիտակ, յերբեմն քիչ թուխ. աչքերը սև, կապույտ, շագանակագույն. մազերը — սև՝ սաթի նման կամ խարոյաշ, փոսկերը — կարմիր. նրանք բախտավոր յեղբայրիկներ են՝ ուսը, հայր, վրացին, թուրքը, հրեան,

ոյրատր, բաշկիրը, Թաթարն ու դալմուզը, ոսն ու
ինգուշը, այնքան շատ են նրանք. ու բոլորն ել
ապրում են մի մեծ ընտանիքում, սոցիալիստա-
կան հայրենիքում. նրանց հայրերն ու յեղբայր-
ները տապալեցին իրենց Թշնամուն, — բուրժույին,
կալվածատերերին, ցարերին ու վոստիկաններին,
փոր դեռ կան ու տանջում են մյուս չորս յեղ-
բայրիկներին: Յե՛վ ահա նրանց մայրերը յերգում
են միևնույնը, ամենքն իր լեզվով.

Բայ, բայ, իմ բալիկ,
բայ-բայ բոյ քաշի,
քանի դեռ մանուկ,
մանկուց դու հիշի՛
հայրիկդ կովով
զավոզը խլեց,
իմ ջան ու ջանիկ,
քեզ նվեր բերեց,
փոր դու իր տեղը
այնտեղ աշխատես,
քո աշխատանքի
վաստակը ուտես:
Բայ-բայ, իմ բալիկ,
բարով մեծանաս,
հայրիկիդ բացած
ճամբովր գնաս:
Բայց չմոռանա՛ս—
այլ յերկրներում
յեղբայրներ ունես,
նրանց դու պիտի
լույս աշխարհ հանես:
Ի՞նչ հրից անցե՛ք,

դուք ջրից անցե՛ք,
հինը խորտակվի,
նոր կյանք կառուցե՛ք...



87. Խե Վանյան ինչպե՛ս ազատեց
քաղխորհուրդը

1.

Հեռվից լսվում եր գնդացրի պրտաղբառը:
Անկյուններում խոնվել եր ամբոխը: Վանյան
մոտեցավ անկյունում կանգնած բանվորին.
— Ասա, ինչպե՛ս մոտենամ խորհրդին:

— Խորհրդի՛ն... բա դու չե՞ս լսում հրացանա-
ձգութ յունը:

Վանյան ուզում եր շուռ գալ, յերբ լսեց
վոր կանչում են իրեն:

— Ա՛յ տղա, սպասի՛ր. հապա յե՛կ:

Վանյան մոտեցավ:

— Ո՞ւմ տղան ես:

— Հայրս բանվոր ե. մետաղագործարանումն
ե աշխատում.

— Հիմա վճռեց ե:

— Խորհուրդ գնաց—մերոնց համար կովելու:

— Ուզում ես հորդ ոգնել:

— Իհարկե:

— Ուրեմն սպասի՛ր:

Բանվորը ծոցատետրից մի թերթ կտրեց, ինչ
վոր մի բան գրեց ու տվեց Վանյային:

— Հենց վոր մոտենաս խորհրդին, այս թեր-
թիկը պահակին տուր: Ասա՛, վոր յերեկոյան մե-
րոնք ոգնութ յան կհասնեն: Չե՞ս մոռանա:

— Չե՛մ մոռանա:

— Ասա թող դիմագրեն, մինչև մենք կհաս-
նենք:

— Շա՛տ լավ:

— Դե՛, գնա՛, սիրելիս, ասածներս չմոռանա՛ս:

2.

Հրապարակը բռնված եր. տեղ-տեղ պետք եր
սողալով անցնել:

Չորս կողմից կրակում եյին: Կարմիրները
պատերի տակ կանգնած դիմադրում եյին: Այլ կողմը
մի տուն եր վառվում:

Վանյան կամացուկ առաջ սողաց: Ահա՛ և խոր-
հուրդը: Վանյան ազատ շունչ քաշեց:

— Վերջապես հասա. իսկ ի՞նչպես ներս մըտ-
նեմ:

— Վանյա, ա՛յ տղա, ես վճռ տեղից լույս ընկար:

Վանյան ուրախութ յունից ճչաց, տեսնելով
ծանոթ բանվորին:

— Հորս եմ փնտռում. չգիտե՞ս վորտեղ ե:

— Այստեղ ե, այստեղ:

Վանյայի սիրտը խփեց. նա հիշեց տոմսը:

— Ա՛յ, մի բանվոր տվեց և ասաց, վոր դի-
մադրեք. յերեկոյան ոգնութ յան կգան:

— Ի՛նչ ես ասում, — բացականչեց բանվորը.
իսկ մենք կարծում եյինք, թե ամեն ինչ վերջա-
ցավ... դե գնանք հայրիկիդ մոտ:

3.

Սենյակում շարժվելու տեղ չկար. կարմիրնե-
րը՝ շինելներում ու բաճկոններում փաթաթված,
խռնվել եյին: Բանվորուհիներ ել կային:

Ադամուկ եր. ձուխը բռնել, բան չեր յերևում:

Վանյան գտավ հորը, վրա վազեց ու գրկեց
նրան:

— Տեսեք, մի տեսեք, ի՛նչ ճարպիկն ե յեղել
այս տղան:

Վանյային շրջապատել են, զգվում են, գուր-
զուրում: Շատերը հուզված են...

— Իսկ վճռեց ե Ստյոպան, հայրի՛կ:

Հայրը տխրեց ու կամացուկ շշնջաց.

— Նրան խփել են. խեղճ, նա ընկավ մեր
գործի համար:

Ամբողջ որ ու գիշեր կրակում եյին խորհրդի շուրջը. քնել անկարելի յեր. մտնում եյին, կես ժամով նստում այս կամ այն անկյունում, ննջում սւ դարձյալ դուրս եյին շտապում. նրանց փոխանակում եյին մյուսները:

Իրությունը վատանում եր:

Հանկարծ մեկը ներս վազելով գոռաց.

— Ընկերներ, յեկան, մերոնք արդեն բռնել են հրապարակը. մի թնդանոթ բռնել ե ճանապարհը, մյուսը կրակում ե թշնամու կողմը: Մենք հաղթում ենք...

Բոլոր կրծքերից դուրս պոռթկաց հաղթական ճիչը—

Կեցցեն խորհուրդները...

88. Բագուն անցյալում

Մենք տեսանք իրար նման ցած, խոնավ, կեղտոտ ու մութ սենյակների մի շարք: Բակում թափթփած եյին խողովակներ, մեծ կաթսաներ, փորոնք յերկար ժամանակ դուրսը մնալով—անպիտաացել եյին:

Կիսամերկ յերեսաներ՝ նավթի մեջ թաթախված, մրոտ—խաղում եյին ձյութախառն ջրի հետ, փոր լճացել եր բակի զանազան կողմերում:

Այստեղ ապրում եյին 300-ից ավելի բանփորներ՝ իրենց ընտանիքներով, փորոնք ամեն բան մոռացած՝ տանջվում, չարչարվում եյին, փոր մի կերպ ապրեն:

Բակում յերբեմն յերևում եյին կանայք. նրանք մինչև սրունքները նավթի մեջ եյին. նրանց շորերը կեղտոտ եյին. նավթի դուլերը ձեռքերին՝ շտապում եյին դատարկելու և նորից գնում կեղտոտ նավթ հավաքելու, փոր պատահմամբ թափթփվել եր փողոցով անցկացրած խողովակներից:

89. Բագուն—այժմ

Դժվար ե ճանաչել Բագուն. համարյա վերացել են «Թուրքական» թաղի տխուր ավերակները, բացված են նոր, լայն փողոցներ, աճել են ծառերը, փորոնք կանաչը կենդանացրել ե շենքերի գորշ տեսքը: Ծովափնյա ծառուղին ժպտում ե փարթամ կանաչով, աղմկում են տրամվայի վագոնները:

Այլևս չեն յերևում սավաններում պարուրած կանանց տխուր ստվերները: Չկան մուրացկաններ, չկա և՛ շռայլություն, և՛ անամոթ շքեղություն՝ աղքատության կողքին:

Վխտում են ուրախ և առողջ մանուկներ, և յես չկարողացա տարբերել, վճռն ե թուրք, վճռը—ռուս:

90. Հասանը

1.

Հեռու յե այն յերկիրը, փորտեղ ապրում ե Հասանը. այդ յերկիրը կարմիր գծից դուրս ե:

Նա մի չոր անապատ ե. այնտեղ վոչ կանա-
չազարդ դաշտեր կան, վոչ ծաղկավետ մարգագե-
տիններ, վոչ գետեր ու լճեր: Քամին քշում, տա-
նում ե վոսկու պես դեղին ավազը դեպի բլուր-
ները, գետնից ավազի սյուներ ե բարձրացնում:
Այն ժամանակ վոչ յերկինք ե յերևում, վոչ ա-
րեգակ:

Հասանի հայրենիքում ուղտի կաթ են խմում,
նրանից պանիր են պատրաստում: Ուղտի միսն
ուտում են, իսկ բուրդը գզում, կտորեղեն գոր-
ծում: Նրանք առանց ուղտերի չեն կարող ապրել:

Ուղտը կարող ե մի քանի օր առանց ջրի
մնալ. քաղցն ել հեշտ ե տանում: Նա տոկուն ե,
համբերող. գնում ե ավազոտ անապատով համա-
չափ ու հանգիստ: Նա տանում ե իր մեջքին թե
մարդկանց, թե բեռներ:

Հարուստներն ունենում են քառասունից մին-
չև հիսուն ուղտ. իսկ Հասանի հայրը հարուստ չե.
Նա մի ուղտիկ նվիրեց վորդուն: Հասանը շատ
ե սիրում ուղտիկին:—Ոյ, ոյ, — կանչում եր նրան:
Ուղտը մոտենում ե, չոքում, Հասանը բարձրա-
նում ե և նստում նրա մեջքին: Շոյում ե ուղտի-
կին, վզից զարդ ու զանգակներ կախում:

2.

Հասանի հայրը շատ հոգսեր ունի. ջրի հոգսը
մի կողմից, ապրուստի հոգսը մյուս կողմից:

Հասանն ու իր քույրը միշտ ոգնում են ծնող-
ներին. Հասանը՝ հորը, իսկ քույրը՝ մորը — տան
գործերում:

Յեղբայրը փոքր ե, դեռ չի աշխատում:

Անապատի ծայրին գտնվում ե քաղաքը. այն-
տեղ կան գեղեցիկ շենքեր, շուր ու բուսականու-
թյուն:

Այդ տներն ու ջրհորները բանվորներն ու
մշակներն են կառուցել. քաղաքի շուրջը ծառեր
են տնկել. հարուստները մեծ-մեծ խանութներում
ապրանքներ են լցրել, առուտուր են անում:

Հասանն իր հոր հետ միայն մի անգամ յեկավ
այդ քաղաքը, բայց իր տեսածը յերբեք չմոռա-
ցավ:

Նա տեսավ, ինչպես հարուստ վաճառականները
ծալապատիկ նստած գորգերի վրա՝ ծխում են.
իսկ գյուղացիները կռացած աշխատում են մին-
չև գիշեր — իրենց տերերի դաշտերում:

Կային և այնպիսի մարդիկ, վորոնք դրսից են
յեկել ու տեր զարձել այս յերկրին. նրանք, այդ
յեկվորները բանտարկել են Հասանի հորյեղբորը,
բանվոր Ռաշիդին, վորը հավաքել եր իր նման
ջահել բանվորներին ու պատմել, թե ինչպես հա-
րուստները շահագործում են չքավորներին, ինչ-
պես պետք ե կռվել հարուստների դեմ:

Հայրը պատմեց այս բոլորը: Հասանն սկսեց
մտածել, վոր ինքը կմեծանա, կգնա այդ գեղեցիկ
քաղաքը, կմիանա Ռաշիդի ընկերներին ու դուրս
կքշի յերկրից հարուստներին:

Այո, կանի, միայն թե շուտ մեծանա...

91. Չինական դպրոց

Դպրոցում չինացիների հետ սպիտակներ ել
եյին սովորում: Սպիտակներն իրենց հեռու եյին

պահում չինացիներին, խեթ-խեթ եյին նայում,
չարացնում եյին, ասելով.

— Եյ շլդիկ, ինչու յես ծամերդ կտրել...

Սաէայն նրանք չեյին հրաժարվում, յերբ
նեղն եյին մնում ու խնդիրներն արտագրում եյին
չինացիների տետրերից.

Մի անգամ Պանը լսեց, վոր մեծ դասամիջո-
ցին ուզում են թվանշաններն ուղղել. քիթը-ցից
«սպիտակը» բանալին գողացել եր, մատյախը հա-
նել ուսուցչանոցից և ընկերների հետ միասին
ուղղել իր թվանշանները նկատեցին. սկսվեց հար-
ցաքննությունը.

— Մենք չե՞նք, — խոսեց քիթը-ցիցը. — այդ չի-
նացիներն են արել, վոր գործը փչացնեն. Յես
ինքս տեսա...

Ել չհամբերեց Պանը. Հարձակվեց ցից-քիթի
վրա ու տվեց նրան բռնունքով. արյունը ժայթ-
քեց, ցից-քիթը գլորվեց, իսկ Պանին քարշ տվին
ու փակեցին դատարկ դասարանում.

Ճաշից հետո ավտոյով յեկավ ցից-քիթի հայրը.
մի հաստիկ մարդ, կարմիր կոճակներով.

Պանը լսում եր, վոր «հայր Դոմինիկոսը»
ներողություն եր խնդրում հաստափորից, իսկ սա
զոռում եր.

— Իմ աչքերի առջև ծեծեցեք այդ չինուկին,
այո...

Կանչեցին դռնապանին. Պանին տարան գրա-
սենյակ, պառկեցրին սեղանի վրա ու... սկսեցին.
Քառասուն հարվածից հետո ճիպոտը կտարվեց.
Հաստափորը գնաց, իսկ ծեծված Պանին չոքեցրին
պատի տակ և այդպես մնաց մինչև յերեկո...

Մյուս որը հայտարարեցին. — ներուժ են աշ-
խատասիրության համար. Մեկ ել նկատեն — դուրս
կանեն.

Պանը և ընկերները ահաբեկվեցին. սիրտ չեյին
անում խոսել, բողոքել. Սպիտակների ծաղրին ու
հայհոյանքներին ուշ չեյին դարձնում այլևս.

92. Քարհատներ

1.

Իրիկնադեմ եր, բանթոդի ժամանակ. Քար-
հատները հոգնել, քլունգներով հարվածելիս յեր-
բեմն փուս եյին անցնում. Մի մեծ քարի շուրջն
եյին խմբվել. Մաքրել եյին չորս կողմը և ուզում
եյին քարը գլորել ցած՝ փոսը. Պետք եր տեղա-
հան անել, բայց քարը պինդ կպած եր ժայռի
ընթի մեջ.

— Հը՞, չեղավ, — ձայն տվեց վարպետը.

Քարհատները չպատասխանեցին ու նոր ուժով
սկսեցին հարվածել քարի հիմքին, քլունգները
խրելով հողի ու ժայռի արանքը՝ հրելու քարը.

— Քլունգները խոր տվեք, — ասաց վարպետ
Սարգիսը, — մեկդ մեջքին զոռեք.

Յերեք քլունգ խրվեցին քարի հիմքը և բան-
վորները վրան ընկան.

Վարպետն սկսեց սրտնեղել.

— Մեջքին, հրահանգեց նա. Դո՛ւ՛ վոտքին —
դարձավ մյուսին. Իե, հա՛...

Բանվորները ուժ տալուց հոգնած՝ բաց թողին
քարը.

— Պի՛նդ ե, — ժպտալով ասաց մեկը:

Վարպետը թիկնոցը մի կողմ նետեց ու հարձակվեց քարի վրա:

— Վոտքին, յերկուսդ ել անցեք յետևը: Հոփ, հոփ, զո՛ռ տվեք...

Քարը դիմադրում էր:

Հինգ մարդ ուժեղ ու պիրկ թևերով զրկեցին քլունդն ու քարը:

Բանվորները կարմրել էյին ինչպես բաղնիսում, քրտինքը ծլլում էր վրաներից, շապիկները դառել էյին լվացքաշոր: Քարը կրճատում էր, փշրում, լեռը խորդում էր խուլ, համառ...

2.

Սարգիսը մոնչաց ու աչքերն արնով լցված հարձակվեց, զրկեց քարն՝ ինչպես վորսորդը արջին: Յե՛վ տաքացավ, մազոտ կուրծքը դեմ տվեց քարին: Նա իր կրծքի միսն ու վոսկորները տրորում էր քարի վրա ու ճգնում, հետում...

Քարհատներն ել մոռացան բանթողը, դժվարությունը: Սարգսի խոսքերից ու շարժումից մղված ուժեղացրին կռիվը:

— Դե, դե, զո՛ռ տվեք: Հոփ, հոփ...

Հանկարծ քարը դոմուաց ու վարազի պես դուրս պրծնելով լեռան ծոցից, փուխը հողի վրա սահեց ներքև:

Սարգսի վռտնատակի հողը քանդվեց, նա նըստեց գետնին և քարի հետ միասին սողաց ներքև:

— Վա՛յ, վա՛յ, — զուռացին բանվորներն ու թափվեցին նրա վրա:

Վտանգն անցել էր:

— Բան չկա, բան չկա, — հեաց Սարգիսը, վոտքս տակը չի:

Բանվորները նրան քաշեցին դուրս:

— Ցավ տվե՞ց — հարցրին:

— Չե, — պատասխանեց. թափ տվեց շորերը, կանգնեց ու մտիկ տվեց քարին:

— Դե, օտբա՛ւ:

Բանթողն ուշացել էր, բայց նա գոհ էր և վոչինչ չէր նկատում:

— Սմեն քարի բնութքը մեկ չի: Քարի բնութքը պետք է իմանաս: Քար կա՛ կռիվ կուզե, պետք է կռվես:

Բանվորները քերծված, չարչարված, յեկան կանգնեցին վարպետի շուրջը:

— Քաղաք շինող ենք, աշխատավոր, գործ ե, շինարարություն, — ասում էր վարպետը:

— Դրուստ ա, վարպետ ջա՛ն, դրո՛ւստ, — ձայն տվին բանվորները:

Սարգիսը վեր կացավ, նայեց քարհանքին մտերմաբար ու գոհ:

— Ե՛հ, յերթա՛նք: Յեղա՛վ:

93. Խեչո բիձու հետ ծուղակում

Ծառերի ճյուղերին ու կոճերին կաշելով Հանեսը վազում էր անտառով: Նա վախենում էր, վոր իրեն հետապնդեն, սակայն յերբ համոզվեց, վոր հետևող չկա — ձորն իջավ:


Մի հաստավիղ մարդ 20 — 25 անասուն առաջն արած, դնում էր: Հասավ, բարևեց:

«Տգուերից ե» — անցավ սլատանու մտքով:
 — Բիձա, վճարողացի յես, — հարցրեց նա:
 — Ալափարսեցի:
 — Տավարը վճարեցից ե:
 — Ճամբարակից ե: Անպիտանի քաղաքը
 թանգ յեղավ:

— Ի՞նչ ես տվել...
 — Ամեն մեկին 2, 3 փութ դարի:

Հանեսը չգարմացավ. նա գիտեր, վոր դաշնակ-
 ների որով՝ սովի ճանկերում տառապող գյուղա-
 ցին նույն իսկ մեկ փութ գարու ծախել ե իր
 աչքի լույս յեզը:

Իսկ դու ո՞ւր կերթաս, — հարցրեց Խեչո
 բիձան:



— Անտեր տղա յեմ, գյուղերում թափառում
 եմ, ուզում եմ մի տեղ մշակ դառնամ:
 — Գնանք իմ տավարը պահիր:

— Շատ լավ, կեղծ ուրախացավ պատանին:
 Համաձայնությունը կնքվեց: Զարխեչի կամրջի
 մոտ սովորականից շատ գինժորներ կան: Պատա-
 նին հասկացավ, բայց փախչելու հնարավորու-
 թյուն չկա:

— Կանգնեք, հրամայեց պահակը, ապա պա-
 տանու շալակից պոկեց տոպրակը և հանեց պլա-
 կատներն ու լողունգները:

— Ես վճարեցից ե լակուտ, — բղավեց նա ու
 մի ծանր ապսակ տվեց:

— Ես բիձեն ե տվել, յես ել սրա մշակն եմ:
 Խեչո բիձեն սարսափից աչքերը չուեց ու դող-
 դողալով կմկմաց:

Յես, յես... խաբար չեմ... արևս վկա...

— Սուս, քափթառ շուն, սրան հիտուն ոռզգի
 տվեք: Զինվորները Խեչո բիձին պառկեցրին,
 հանեցին շորերն ու սկսեցին հարվածել՝ ծանր ու
 անողոր:

— Վայ, մեռն, ինձ միք սպանի, յես խաբար
 չեմ, եզ լակուտը, յես գրան ինչ ասեմ, — բղավում
 եր Խեչո բիձեն: Հանեսի քեֆին քեֆ չի հասնի,
 լիաթոք ծիծաղում ե ու մտքումն ասում. «Դե կեր,
 յեզն յերկու փթով կառնես հա»:

— Ի՞նչ ես հռնում, լակուտ, բղավեց միլի-
 ցիոներներից մեկն ու հրացանի կոթով պատանու
 վզին ալնպես խփեց, վոր նա գլորվեց ցած: Մի-
 լիցիոներները վրա թափվեցին ու սկսեցին տրո-
 րեք: Պահակապետը փրփրած սկսեց քացի տալ
 նա կոշիկի կրնկով ուժեղ հարվածեց պատանու
 ձախ հոնքին: Արյունը ներկեց պահակապետի կո-
 շիկն ու պատանու յերեսով սկսեց հոսել ցած:

Ձեռները հեռեից ամուր կապկպեցին ու յերկուսին ել առաջ արին. Դիլիջան են տանում—բանտարկելու:

94. Ի. Վ. Ստալին



Հսկեր Ստալինը լենինի ամենալավ աշակերտն է:
Նա կոմկուսակցության առաջնորդն է:
Հսկեր Ստալինը ծնվել է 1879 թվին:

Ճնադարյան գութանից,
անհասարական աշխարանից
ու անփայտաթղթանից դեպի
կարարելագործված Մեֆեմաները,
ընդհանուր աշխարանի ու
յերկրի կառուցումը:

95. Ինստերնայիտնայ
Ֆելիք, ում կյանքը անիծել է,
ով ծորք է, Մերկ է և սրբունկ:
Նորոտե վառվում են Մեր սրբունկ,
սրբունկ կռվի յետև Մեր չգրում:
Նյա հիմ աշխարհը կիրոտեմ Մեր
Միւշկա հիմքերը և հետո
Մեր նոր աշխարհը կրիտեմ Մեր,
ուր վոչ սրբունկ կա, վոչ դժգոհ:

Սա չէ վերգին կռիվը
և պայքարը Մեր Մեծ,
ինստերնայիտնայը
աշխարհը կիրկե:



ՆՅՈՒԹԵՐԻ ՑԱՆԿ.

	Եջ		Եջ
1. Յերբ և լինում	3	49. Սղաճ	62
2. Նորբաց դեպքի աշխատանք	3	50. Ինչպես սովորեցի ձի հեծնել	64
3. Հասմիկի նամակը	4	51. Գործարանում	66
4. Կռունկը	5	52. Նրանք բախտավոր են	67
5. Մանկերը պատմություն	7	53. Կարմիրն ու գայլը	69
6. Մեղվանոցում	9	54. Բուդյոնին սպիտակների մոտ	70
7. Առյուծն ու աղվեսը	10	55. Մարտի 8-ը	72
8. Դո գործը սովորելն է	11	56. Մոր յերգը	74
9. Ծրան ու ծածեռնակը	12	57. Կոմունան	75
10. Բրդոտ խաղընկերը	13	58. Բարկադի վրա	77
11. Դաշտերում	14	59. Կոմունայի որերին	77
12. Փոքրիկ ձկնորսներ	15	60. Վլ. Իլյին Լենին	79
13. Պայմանագիր	17	61. «Կորդեգերը»	82
14. Անվախ Մարիամը	17	62. Առջի ու կատվի կռիվը	83
15. Ածխափորի յերգը	18	63. Նշ և սոխակ	86
16. Ձկնավաճառի մոտ	19	64. Կովն ու գելադալը	87
17. Անուններ	20	65. Կարմրախայտի վորսը	88
18. Սահլաթը ղուներ	21	66. Մայիսյան բզեզը	90
19. Հոկտեմբերիկին	22	67. Աբալուսյան	91
20. Աղուն	22	68. Մայիսի 1-ն անցյալում	92
21. Յերկու աշակերտ	23	69. Մայիսյան յերթ	94
22. Յերեկ ու այսոր	25	70. Ինչպես տոնեցին մայիսի 1-ը	94
23. Ջրահագնացը	26	71. Թշնամիները	96
24. Հավատարիմ ընկերը	27	72. Տեքստիլում	98
25. Մեր ղուներ	29	73. Կանաչ քաղաք	98
26. Բաղադր դիշերով	31	74. Կապիտալիստական դպրոցում	101
27. Յերկու ընկեր	33	75. Այսարհում կա մի մեծ յերկիր	104
28. Պետիկի դեղատոմսը	34	76. Մենք ել սոցիալիզմ ենք կառուց.	106
29. Յերկու մեքենա	35	77. Գլալ և արուսիկ	108
30. Կառուցողներ	36	78. Արուսի պայմանը	109
31. Ջմառն ճանապարհ	37	79. Սունկի ծնունդը	112
32. Փոքրիկ գյուղացին	38	80. Մետաքսի Թաշկինակը	113
33. Ո՞վ ինչպես է ուտում	39	81. Գիշերն անտառում	115
34. Դիքորի գրքերը	41	82. Փոթորիկ	118
35. Հանելուկ	42	83. Շնաձուկը	119
36. Կաղնու անվորները	44	84. Թեպուրը	122
37. Կոլխոզի դաշտում	44	85. Ընկերներ	125
38. Կուրի գետի հետ	45	86. Հինգ յերգայրիկներ	126
39. Լենին	48	87. Թե վանյան ինչպես աղաթեց	129
40. 1924 թ. հունիսի 21	48	88. Բաղուն անցյալում	132
41. Վլ. Իլյին հետ սանատորիայում	49	89. » այժմ	133
42. Բանտում	50	90. Հասանը	133
43. Աղվեսը	51	91. Զինական դպրոցում	135
44. Մանչուկն ու կուտիկը	52	92. Բարահատներ	137
45. Դժվար աշխատանք	54	93. Պեչո բիձու հետ	139
46. Գիշերն անտառում	55	94. Ի. Վ. Ստալին	142
47. Վոչ մի գայլ մեր հանդերում	58	95. Ինտերնացիոնալ	143
48. Հրաշալի անակ	60		

ՀՀ Ազգային գրադարան



NL0977086

ԳԻՆԸ 1 ՈՌԻՔ. 40 ԿՈՊ.
4ԱԶՄԸ 35 ԿՈՊ.

195

11

26677

ՀԱՅՍՏԱՆԻ ԵՎ ՀՈՒՆԻ ԼՈՐՍԺԱՆԱՍԻՐ
ԿՈՒԼԵԳՈՐԴԻ ԿՈՂՄԵՐ

Составил М. ДУРГАРЯН
Учебник армянского языка II год
ГИЗ ССР Армении Э Р И В А Н Ь 1933